# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Լ. ՏԱՐԻ ԹԻՒ 45 (1495) ՇԱԲԱԹ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 11, 2010
VOLUME 30, NO. 45 (1495) SATURDAY, DECEMBER 11, 2010

Պաշտօնաթերթ՝ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ԵԱՀԿ ԳԱԳԱԹԻ ԺՈՂՈՎԻ ԸՆԹԱՑՔԻՆ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ «ՂԱՐԱԲԱՂԸ ԱՊԱԳԱՅ ՉՈՒՆԻ ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ԿԱԶՄԷՆ ՆԵՐՍ»

Դեկտեմբերի առաջին օրերուն Ղազախիստանի մայրաքաղաք Աստանայի մէջ տեղի ունեցած Եւրոպայի Ապահովութեան եւ Անվտանգութեան Կազմակերպութեան (ԵԱՀԿ) անդամ երկիրներու գագաթի ժողովի ընթացքին ելոյթ ունենալով, Հայաստանի գործող նախագահ Սերժ Սարգսեան յայտարարեց, որ Ղարաբաղը ապագայ չունի Ատրպէյճանի կազմէն ներս եւ ինչպէս որ ալ ըլլան առաջարկուող լուծումները, անոնք պէտք է բխին Լեռնային Ղարաբաղի ժողովուրդի շահերէն:

«Ատրպէյճանի կողմից ռազմական ագրեսիան վերսկսելու դէպքում Հայաստանը չի ունենայ այլ ընտրութիւն, քան ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը «դէ ժուրէ» եւ իր բոլոր հնարաւորութիւնները ներդնել Արցախի ժողովրդի անվտանգութեան ապահովման համար», - յայտարարած է Սերժ Սարգսեան:

Միաժամանակ, ան ըսած է որ, «Հայաստանը կտրականապէս չի ընդունում Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողութիւնների վերսկսման տարբերակը»:

«Լեռնային Ղարաբաղը ապագայ չունի Ատրպէյճանի կազմում, եւ, ինչպիսին էլ լինի լուծումը, այն պէտք է բխի հենց Ղարաբաղի ժողովրդի կամքից: Դա է ժողովուրդների ինքնորոշման իրաւունքի առանցքը: Ատրպէյճանը չունի Լեռնային Ղարաբաղի նկատմամբ յաւակնութիւնների ո՛չ իրաւական, ո՛չ քաղաքական եւ ո՛չ էլ բարոյական հիմք»:

«ԵԱՀԿ-ի տարածքում բնակուող ժողովուրդները յոյսով եւ սպասումով են հետեւում Հելսինքեան Եզրափակիչ ակտում ընդգրկուած սկզբունքների ամբողջական կիրառմանը: Նրանցից է Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը, որը եւս կարող է ակնկալել այդ նոյն սկզբունքների ու պարտաւորութիւնների իրականացումը, որոնք համընդհանուր են՝ անկախ երկրի չափերից, բնակչութեան քանակից եւ բնական պաշարներից», - ըսած է Սերժ Սարգսեանը իր ելոյթին մէջ:



«Լեռնային Ղարաբաղը 1991 թուականի Սեպտեմբերին հռչակեց իր անկախութիւնը, որուն յաջորդեց նոյն թուականի Դեկտեմբերին կայացած Լեռնային Ղարաբաղի անկախութեան հանրաքուէն, լիովին համապատասխանելով միջազգային իրաւունքի նորմերին եւ Խորհրդային Միութեան գործող օրէնսդրութեանը: Դրան յաջորդած ԽՍՀՄ փլուզման արդիւնքում ձեւաւորուեցին նաեւ երկու իրաւահաւասար պետական կազմաւորումներ՝ Ատրպէյճանի Հանրապետութիւնը

Շար.ը էջ 5

## ՀԱՅԱՍՏԱՆ ԸՆԴՈՒՆԱԾ Է ԻՐԱՆԻՆ ԶԷՆՔ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԻՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Դեկտեմբեր 7-ին «Ուիքիլիքս» հրապարակեց Հայաստանին առնչուող երկրորդ փաստաթուղթը, որ դարձեալ կը վերաբերի Իրան զէնք փոխադրելու հարցին:

Միացեալ Նահանգներու Պետական Գրասենեակի արխիւներէն գողցուած այս նոր փաստաթուղթը տեղեկագիր մըն է, որ պատրաստուած է Երեւանի մէջ Ամերիկայի դեսպան Մարի Եովանովիչի կողմէ:

2009-ի Յունուար 14-ին, արտահանման վերահսկողութեան հարցերով դիւանագէտ Մահլի Երեւան ժամանելով, առանձին հանդիպումներ ունեցած է Ազգային Անվտանգութեան Ծառայութեան (ԱԱԾ) պետ Գորիկ Յակոբեանի եւ Սերժ Սարգսեանի հետ: Տրուած ըլլալով որ, Հայաստանի իշխանութիւնները նախապէս մերժած էին Իրան զէնք փոխադրելու մասին տեղեկութիւնները, Մահլի իր հետ բերած է յստակ փաստաթուղթեր,

Շար.ը էջ 4

## ԱՏԱՄ ՇԻՖ ԱՆՀԱՆԳՍՏԱՑՆՈՂ ԿԸ ՆԿԱՏԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ «ՈՒԻՔԻԼԻՔՍԻ» ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Պատասխանելով «Կլէնտէլ Նիւզ Փրես» թերթի հարցումին, Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան անդամ Ատամ Շիֆ, որուն ընտրատարածքը կ'ընդգրկէ Հարաւային Քալիֆորնիոյ հայաշատ քաղաքները, ««Ուիքիլիքսի» կողմէ հրապարակուած եւ Հայաստանին վերաբերող փաստաթուղթերը «չափազանց անհանգստացնող» կոչած է:

Խօսելով բացայայտուած նամակի մասին, ամերիկա-հայկական յարաբերութիւններու զարգացման կողմնակից եղող գոնկրէսական Շիֆի գայն գնահատուած է որպէս անհանգստութիւն յառաջացնող իրադարձութիւն:

Յիշեցնենք որ, Նոյեմբեր 28-ին «Ուիքիլիքս» հրապարակած էր գաղտնի փաստաթուղթ մը, 2008-ի Դեկտեմբեր 24-ին Հայաստանի իշխանութիւններուն ուղղուած բաւական խիստ մէկ նամակը, որուն մէջ Միացեալ Նահանգներու պետական քարտուղարի փոխանորդ Ճոն Նեկրափոնթէ գայրոյթ կը յայտնէ, Հայաստանի վրայով դէպի Իրան զէնքերու փոխադրութեան կապակցութեամբ եւ կը սպառնայ պատժամիջոցներ կիրառել Հայաստանի դէմ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՒԵՐԻՉ ԵՐԿՐԱՇԱՐԺԷՆ ԱՆՑԱՒ 22 ՏԱՐԻ



Երկրաշարի պատճառաւ աւերակ դարձած հազարաւոր շէնքերէն մին

1988 թուականի Դեկտեմբեր 7-ին, տեղական ժամանակով 11:41-ին, Հայաստանի մէջ տեղի ունեցաւ ուժգին երկրաշարժ, որուն չդիմացան շինարարական խախտումներով կառուցուած հազարաւոր շէնքեր:

Երկրաշարժը ընդգրկեց Երկրի Հիւսիսային եւ հիւսիսարեւելեան շրջաններու մօտ 40%-ը: Վայրկեաններու ընթացքին գրեթէ ամբողջութեամբ աւերակ դարձան Սպիտակ, Լենինական (Գիւմրի), Կիրովական, Ստեփանաւան քաղաքները:

Զոհուեցան աւելի քան 25 հազար հոգիներ: Մարդկային ամենամեծ կորուստները արձանագրուեցան երկրաշարժի կեդրոնը նկատուող Գիւմրիի եւ Սպիտակի մէջ:

Զոհուածներու հարազատներուն համար միակ մխիթարութիւնը մահացած ազգականներու դիակները աւերակներու մէջէն գտնելն ու հողին յանձնելն էր:

1988-ի երկրաշարժէն յետոյ է որ, Հայ ժողովուրդի բառապաշարին մէջ աւելցան «աղէտի գօտի» եւ «մարդասիրական օգնութիւն» հասկացողութիւնները:

Երկրաշարժի պատճառած վնասները օրին գնահատուեցան 13 միլիար ռուբլի: Խորհրդային Միութեան այդ օրերու նախագահ Միխայիլ Կորպաչով խոստացաւ շատ արագ վերականգնել աւեր-

Շար.ը էջ 4

## ՄԻՋ-ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԻՒՊԱՏՈՍԻՆ ՀԵՏ

Երկուշաբթի Դեկտեմբեր 6ին, առաւօտեան ժամը 11ին նախապէս առնուած ժամադրութեան մը համաձայն, Լոս Անճելոսի մօտ Լիբանանի աւագ հիւպատոսարանին մէջ, տեղւոյս հայկական միջ-կուսակցական պատուիրակութիւնը հանդիպում մը ունեցաւ հիւպատոսուհի տիկին Մատոնա Աուն Ղազալի հետ:

Վերոյիշեալ պատուիրակութեան մաս կը կազմէին Գաբրիէլ Մոլոյեան (Ս.Դ.Հ.Կ.), Յակոբ Նազիրեան (Ռ.Ա.Կ.) եւ Վարուժան Ուրֆալեան (Հ.Յ.Դ.): Հանդիպման ընթացքին, ներկաները իրենց մտահոգութիւնը յայտնեցին Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ռէժէփ Թայիփ Էրտողանի վերջերս Լիբանան կատարած այցի եւ անոր ետին թագնուած մութ ծրագիրներու մասին: Անոնք յոյս յայտնեցին որ Լիբանանի կառավարութիւնը այսուհետեւ իմաստութեամբ կը շարունակէ իր աւանդական քաղաքականութիւնը Թուրքիոյ հետ: Այնուհետեւ պատուիրակութիւնը երեք կուսակցութիւններու անունով յուշագիր մը յանձնեց Տիկին Մատոնային զայն փոխանցելու համար Լիբանանի արտաքին գործոց նախարարութեան: Հիւպատոսուհին կատարեալ հասկացողութիւն ցոյց տուաւ արտայայտուած մտահոգութեանց համար եւ խոստացաւ յուշագիրը կարդալէ ետք փոխանցել առ որ անկ է:

# ԴՐՍԻ ՈՒ «ՆԵՐՍԻ» ԼԵԶՈՒՆ

***ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ***

*ԵԱՀԿ Աստանայի վեհաժողովում Սերժ Սարգսեանի ելոյթը կարծես թէ վատը չէ: Ինչ խօսք, Սարգսեանը զերծ չմնաց «պատմական» թեմատիկայի շօշափման գայթակղութիւնից, բայց այս անգամ դա գոնէ չափաւոր էր, եւ Հայաստանի նախագահի պաշտօնը զբաղեցնող գործչի ելոյթը բաւական յարիր էր միջազգային քաղաքական ամբիոնին, ինչպիսին ԵԱՀԿ վեհաժողովն է: Ռազմավարական իմաստով ելոյթի բովանդակութիւնը կարծես թէ համահունչ է Հայաստանի պետական շահին: Թէեւ այդօրինակ բաները միշտ էլ կարելի է կասկածի տակ առնել, քննարկել թէ ռազմավարական, թէ առաւել եւս մարտավարական նրբերանգների արդարացուածութեան համատեքստում: Բայց գլխաւոր հարցը, որ կայ ելոյթի բովանդակութեան հետ կապուած, վերաբերում է դրա ներքին ամրութեանը:*

*Խօսքն այն մասին է, թէ Սերժ Սարգսեանի ելոյթը ներքին ինչ բազա ունի: Չէ որ ցանկացած նախագահի ելոյթ, որ հնչում է միջազգային ատեանում, ուժ, կշիռ եւ արժէք է ներկայացնում ոչ թէ ինքնին, այլ ելնելով տուեալ նախագահի ներքին բազայից: Ահա այդ առումով ակնյայտ է, որ Սերժ Սարգսեանի ելոյթը կառուցուած է բաւական երերուն հողի վրայ: Ոեւէ մէկի համար գաղտնիք չէ, որ Սերժ Սարգսեանի նախագահական բազան մեղմ ասած բարւոք վիճակում չէ: Նա առ այսօր չի կարողացել արդիւնաւէտ խօսակցութիւն ծաւալել սեփական հասարակութեան հետ, ինչը բացառում է արտաքին աշխարհի հետ ծաւալուած խօսակցութեան արդիւնաւէտութիւնը: Խօսքն իհարկէ պետական շահի տեսանկիւնից է, որովհետեւ անձնական կամ խմբակային շահից տեսանկիւնից Սերժ Սարգսեանը գուցէ ստանում է իր ակնկալած շահը:*

*Իսկ պետական շահի տեսանկիւնից, դժուար է պատկերացնել, որ ներքին բազայից զուրկ նախագահի արտաքին ելոյթները կարողանան ծանրակշիռ ընկալում գտնել միջազգային քաղաքականութեան սուբիեկտների մօտ: Բանն այն է, որ Հայաստանի տնտեսա-քաղաքական իրավիճակը, սոցիալական ծանրացող խնդիրները, իրաւական կամայականութիւնն ու անօրինականութեան մեղմ ասած բարձր տոկոսը թոյլ չեն տալիս պետութեանը լուրջ ընկալում ունենալ աշխարհում:*

*Մօտենում է խորհրդարանի եւ նախագահի նոր ընտրութեան շրջանը, մինչդեռ երկիրը դեռեւս գտնւում է վերջին՝ 2008 թուականի ընտրութեան եւ յետընտրական իրադարձութիւնների ռեժիմում, այդ իրադարձութիւններից ձեւաւորուած օրակարգում: Լուծուած չէ քաղբանտարկեալների հարցը, լուծուած չէ Մարտի 1-ի իրադարձութիւնների կոնկրետ պատասխանատուութեան, սպանութիւնների կոնկրետ կատարողների եւ հրաման տուողների պատասխանատուութեան հարցը:*

*Իշխանութիւնը շարունակում է իր յենարանը փնտռել օլիգարխիայի շրջանում, ինչի վկայութիւնը գնաճի անընդհատ պրոցեսն է, սոցիալ-տնտեսական բնոյթի այն որոշումները, որոնց կայացման եւ իրականացման գործում քաղաքացին որեւէ կերպ չի կարողանում տեսնել իր շահը, փոխարէնը ակնյայտ տեսնում է, որ իրենից լրացուցիչ փողեր են պահանջւում, որոնք համալրելու են ինչ որ մարդկանց գրպանը: Մինչդեռ քաղաքացին կոյր չէ, եւ եթէ կառավարութեան այդ որոշումների մէջ շահ ունենար, ապա հազիւ թէ հնարաւոր լինէր որեւէ միջոցով նրա աչքից ծածկել այդ շահը եւ թոյլ չտալ, որ քաղաքացին դա տեսնի: Նա առնուազն կը զգար դա: Մինչդեռ հիմա տեսնում է եւ զգում, որ իշխանութիւնը շարունակում է հետեւողականօրէն սպասարկել օլիգարխիայի եւ կոռումպացուած չինովնիկութեան շահը, իսկ հասարակութեանը մատուցել մէկը միւսից պարզունակ իմիտացիաներ, քարոզչական փուչիկներ:*

*Բազան թոյլ է նաեւ գլոբալ մակարդակով, քանի որ Հայաստանը յայտնուել է պարտքով ապրող երկրների ցանկում, եւ եթէ արտաքին վարկերը մի քիչ ուշանում են, Հայաստանի տնտեսութիւնը յայտնւում է լուրջ ցնցումների նախաշեմին: Հայաստանի տնտեսութիւնը վերածուել է «թմրամոլի», որը նստած է «վարկային ասեղի» վրայ: Արդեօք այն երկրները, որոնք պարտք են տալիս մեզ, կարող են լուրջ ընդունել միջազգային հարթակներում մեր ելոյթները: Հազիւ թէ: Իսկ պարտք էլ տալիս են ոչ թէ այն պատճառով, որ մեզ վստահում են եւ համարում լուրջ երկիր, ինչպէս սիրում է բացատրել Հայաստանի իշխանութիւնը, այլ որովհետեւ նախ մեզ տուած պարտքը ոչ մի բան է իրենց ունեցածի համեմատ, թէկուզ ճգնաժամի պայմաններում, եւ դրանից էլ բացի մեզ պարտք են տալիս, որ գոյութիւն պահպանենք եւ աւելորդ գլխացաւանք չդառնանք իրենց առանց այդ էլ բազմազբաղ գլխին:*

*Ակնյայտ է, որ Հայաստանի իշխանութեան, Սերժ Սարգսեանի դրսի եւ ներսի լեզուների միջեւ կայ մեծ անհամարժէքութիւն: Դրանք տարբեր լեզուներ են, մինչդեռ արժէք ձեռք են բերում ներդաշնակ լինելու, ամբողջական լինելու պարագայում: Այդ մասին է, որ թերեւս արժէ խորհել, վերջապէս: Եթէ աշխարհը լսում է, եթէ ելնելով սեփական շահերից, կամ այդ շահերի բախումից չի ձեռնարկում քայլեր, որոնք հակասում են Հայաստանի պետական շահին, չի ներկայացնում այդ շահին հակասող պահանջներ ու ճնշումներ, դա դեռ չի նշանակում, որ Հայաստանի խօսքն ընդունւում են հալած յուղի տեղ: Երբ չկայ դրանց ներքին բազան, աւելորդ է խօսել այդ խօսքերի լաւ, ճիշդ, արդարացի կամ հզօր լինելու մասին: Այդ խօսքերը կարող են լինել ընդամէնը գեղեցիկ, այն էլ արտաքինից: Իսկ ներսից դրանք շարունակում են մնալ դատարկ, սոցիալական եւ քաղաքացիական հիմքից զուրկ: Այդ դատարկութիւնն է Հայաստանի ամենամեծ խնդիրը, ամենամեծ մարտահրաւէրը: Մնացեալն ընդամէնը հետեւանքներ են:*

*«ԼՐԱԳԻՐ»*

# ԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՆ Է ԼԱՒԸ

***ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ***

*Եւ այսպէս, Հայ Ազգային Կոնգրէսի առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանը ՀԺԿ համագումարում վերահաստատեց, որ իր ղեկավարած կառոյցի մօտակայ նպատակը ոչ թէ ինչ-որ գաղափարախօսութիւններ պարզելն է, այլ «սահմանադրական կարգի վերականգնումը»: Նպատակն, ընդհանուր առմամբ, ճիշդ է ձեւակերպուած. Սահմանադրութիւնն այսօր ամէն քայլափոխի լկտիաբար խախտւում է նախեւառաջ իշխանութիւնների կողմից, եւ կարելի է ասել, որ ներկայիս իրականութիւնը նոյնքան հեռու է մեր այսօրուայ Գլխաւոր օրէնքից, որքան 1936 թուականին ընդունուած ստալինեան սահմանադրութիւնը՝ այդ թուականների պրակտիկ կեանքից: Թերթի այդ փոքր տարածքը ծախսել՝ ապացուցելու համար, որ այսօր Հայաստանում ոչ մի սահմանադրական կարգ չկայ՝ անիմաստ է: Իսկ եթէ չկայ նման կարգ, ապա չկայ նաեւ քաղաքական դաշտ, եւ այդ դէպքում գաղափարախօսութիւնների մասին խօսելն էլ է անիմաստ:*

*Այդքանով հանդերձ, ինձ թւում է, որ «ժողովրդական լայն սպառման համար» սահմանադրական կարգ վերականգնելու կարգախօսը հնչեցնելը նոյնպէս արդիւնաւէտ չէ: «Լայն զանգուածները» երազում են, որ «էս թալանչիները» հեռանան, ճիշդ նոյն ցանկութիւնը նրանք ունէին առաջին եւ երկրորդ նախագահների ժամանակ, քանի որ «հեռանալու» հետ յոյսեր են կապում, որ կը գայ «ոչ թալանչի», «ժողովրդի մասին մտածող» իշխանութիւն: Սահմանադրութիւնը եւ սահմանադրական կարգը չափից դուրս վերացական հասկացութիւններ են՝ դրանք ընդդիմութեան դրօշի վրայ գրելու համար: Աւելի լաւ է դրանք փոխարինել ինչ-որ մի հանրամատչելի կարգախօսով. ասենք, «կորչե՛ն թալանչիները»:*

*Երկրորդ. վերականգնել կարելի է այն, ինչ երբեւէ գոյութիւն է ունեցել: Սահմանադրական կարգ ասելով, ես, օրինակ, հասկանում եմ այնպիսի իրավիճակ, երբ բուն Սահմանադրութիւնն ընդունւում է քաղաքացիների համաձայնութեամբ, ոչ թէ ծեծուջարդով, երբ նախագահն ու պատգամաւորները նոյնպէս ընտրւում են օրէնքով, երբ դատարաններն անկախ են եւ այլն, եւ այլն: Հայոց թագաւորութիւններում նման բան, որքան հասկանում եմ, չի եղել: Առաջին հանրապետութիւնում հարբած մաուզերիստները նոյնպէս, պէտք է ենթադրել, սահմանադրական կարգի ամենաջերմ ջատագովները չէին: Խորհրդային հանրապետութեան մասին խօսելն իսկ աւելորդ է:*

*Գուցէ սահմանադրական կարգ կար 1990-ականների անկախ Հայաստանո՞ւմ: Բա իհարկէ՝ կար, այն էլ ինչպիսին: Ոչ ոք չէր համարձակւում այդ կարգը խախտել: Թէ չէ՝ երկրապահները քացու տակ կը գցէին:*

*«ԱՌԱՒՕՏ»*

# ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԻՄԻՏԱՑԻԱ

*Մարդկութեան ողջ պատմութիւնը պայքար է արդարութեան համար: Ինչեր ասես չեն մտածել մարդիկ արդարութեան հասնելու եւ այն ապահովելու համար. էլ զանազան ինստիտուտներ են ստեղծել, էլ օրէնսգրքեր ու աշխատութիւններ գրել, էլ պատերազմներ ու յեղափոխութիւններ արել, հեքիաթներ ու լեգենդներ հորինել: Պարզուել է՝ ամեն ինչ զուր է, յամենայնդէպս, արդարութիւն ապահովող հարիւր տոկոսանոց մեխանիզմ եւ երաշխիքներ ստեղծել մարդկութեանն այդպէս էլ չի յաջողուել: Եւ հաշտուել են այն իրողութեան հետ, որ մարդիկ ծնւում են հաւասար, սակայն ապրում են խիստ անհաւասար պայմաններում: Որ օրէնքը գործում է ոմանց համար, իսկ միւսների՝ դէմ: Որ ոմանք օգտւում են կեանքի բոլոր բարիքներից, երբ դրա համար ոչ մի արժանիք չունեն, իսկ միւսները? արժանիները, զրկուած են տարրական բարեկեցութիւնից: Անգամ կեանքի, առողջութեան, երջանկութեան հարցերում, որոնք տրւում են ի վերուստ, մարդիկ հաւասար չեն: Եւ արդարութեան պակասը մարդիկ փորձել են լրացնել տարբեր մխիթարութիւններ հորինելով: Չկայ մարդու իրաւունքների պաշտպանուածութիւն, բայց կայ Մարդու իրաւունքների պաշտպանութեան միջազգային օր: Չկայ արդար դատարան, բայց կայ երդուեալ ատենակալների ինստիտուտ, որտեղ շարքային մարդիկ են՝ այդ անարդարութիւններից անձամբ տուժածները, որոնց դատելու եւ արդարութիւն հաստատելու իրաւունք է տրուած: Որոշումներ կայացնելիս մարդկանց կարծիքը հաշուի չեն առնում, բայց նրանք հնարաւորութիւն ունեն ազատօրէն փողոց դուրս գալու, երթեր-ցոյցեր անելու, պլակատներով իշխանական շէնքերի առաջ կանգնելու: Վերջապես՝ չկայ դեմոկրատիա, բայց կայ դրա համար մղուող անդուլ պայքար: Եթէ կարճ ձեւակերպենք, ապա սա արդարութեան իմիտացիան է, եւ սրա վրա է կանգնած մեր երկրագունդը:*

*«ՀՐԱՊԱՐԱԿ»*

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**

**Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

## ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԸ ՆԱՄԱԿՆԵՐ Է ՈՒՂԱՐԿԵԼ ԵՒՐՈՊԱ



*Դեկտեմբերի 3-ին ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը նամակներ է յղել Եւրոպական խորհրդի նախագահ Հերման վան Ռոմպոյին, ԵՄ Արտաքին յարաբերութիւնների եւ անվտանգութեան քաղաքականութեան Բարձր ներկայացուցիչ Քեթրին Էշտոնին եւ Մարդու իրաւունքների Անձնական ներկայացուցիչ Ռիինա Կիոնկային: Նամակներում Հայ ազգային կոնգրէսի առաջնորդը կարեւորում է Դեկտեմբերի 7-ին կայանալիք ԵՄ-Հայաստան Մարդու իրաւունքների երկխօսութեան ընթացքում մի քանի կարեւոր հարցերի բարձրացման անհրաժեշտութիւնը:*

*Նամակում, մասնաւորապէս, նշւում է, որ հեղինակաւոր Եւրոպական կազմակերպութիւնները պէտք է լուրջ ջանքեր գործադրեն, որպէսզի ՀՀ իշխանութիւնները վերջապէս կատարեն ԵԽԽՎ վերջին չորս բանաձեւերի, ԵՄ նախագահութեան 2008թ. Մարտի 4-ի, Մարտի 12-ի եւ 2010թ. Մարտի 10-ի յայտարարութիւններում առկայ պահանջները: Խնդիրների ցանկն ընդգրկում է Հայաստանում քաղբանտարկեալների առկայութիւնը, Մարտի 1-ի սպանութիւնների անկողմնակալ եւ վստահելի քննութիւնը, Ա1+ հեռուստաընկերութեան եթերազրկումը եւ ազատ հաւաքներ անցկացնելու քաղաքացիների իրաւունքի ոտնահարումը:*

*Ներկայացնելով նշուած խնդիրների վերաբերեալ մանրամասն տեղեկութիւններ՝ Առաջին նախագահը վստահութիւն է յայտնում, որ ԵՄ-Հայաստան Մարդու իրաւունքների երկխօսութիւնը կարող է կարեւոր եւ արդիւնաւէտ գործիք հանդիսանալ այս հարցերում Հայաստանի իշխանութիւնների որդեգրած վարքագիծը փոխելու համար: «Անհրաժեշտ են վճռական եւ շարունակական ջանքեր, յատկապէս քաղբանտարկեալների ազատ արձակման հարցում: Փորձը ցոյց է տալիս, որ նման ջանքերը տալիս են ցանկալի արդիւնք: Դրանք կարող են նաեւ ցրել հայկական հասարակութեան այնպիսի վնասակար ընկալումները, որ Եւրոպան պատրաստ է զոհաբերել սեփական արժէքները՝ ԼՂ բանակցութիւններում եւ հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման հարցերում Հայաստանի իշխանութիւններից զիջումներ ստանալու փոխարէն»,- նշուած է ՀՀ Առաջին նախագահի նամակներում:*

## ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ ՀԺԿ-Ի 7-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ




*Դեկտեմբեր 4-ին տեղի ունեցաւ Հայաստանի ժողովրդական կուսակցութեան (ՀԺԿ) 7-րդ համագումարը, որտեղ կուսակցութեան ղեկավար Ստեփան Դեմիրճեանը հանդէս եկաւ ելոյթով:*

*Խօսելով մեր արտաքին քաղաքականութեան մասին, ՀԺԿ նախագահն ասաց, որ «ֆուտբոլային դիւանագիտութեան» արդիւնքում Թուրքիան աւելի շատ ներգրաւուեց ԼՂ հակամարտութեան կարգաւորման գործընթացին: Դեմիրճեանը կրկին մատնանշեց մեր արտաքին քաղաքականութեան բացթողումները, որոնք հանգեցրել են միջազգային տարբեր ատեաններում բազմաթիւ ոչ հայանպաստ բանաձեւերի ընդունմանը:*

*Ինչ վերաբերում է սոցիալական խնդիրներին՝ Ստեփան Դեմիրճեանն ասաց, որ երկրում տիրում է քրէաօլիգարխիկ համակարգը, ինչի հետեւանքով ՀՀ-ում այսօր մօտ մէկ միլիոն մարդ աղքատ է:*

*Անդրադառնալով բոլոր ընտրութիւններին՝ ՀԺԿ նախագահն ասաց, որ դրանք միշտ կեղծուել են: Իսկ վերջին կեղծուած ընտրութիւնը, Դեմիրճեանի խօսքերով, յանգեցրեց Մարտի 1-ի դէպքերին. «Մարտի 1-ի էջը կը փակուի այն ժամանակ, երբ դատարանի առջեւ կը կանգնեն այդ իրադարձութիւնների պատասխանատուները»:*

*Դեմիրճեանը, դատապարտելով իշխանութիւնների գործելաոճը, կոչ է արեց ազատ արձակել քաղբանտարկեալներին:*

## «ՀՐԱՊԱՐԱԿ». ԲՀԿ-Ն «Ո՞Չ» Է ԱՍՈՒՄ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ

*«Հրապարակ» թերթի տեղեկութիւններով Քաղաքական շրջանակներում շրջանառուող լուրերի համաձայն՝ վերջերս ներիշխանական նոր խմորումներ են եղել, մասնաւորապէս տեւական ժամանակ առաջ Յովիկ Աբրահամեանի միջոցով ԲՀԿ ղեկավար Գագիկ Ծառուկեանին փոխանցուել է, որ նա կամ պէտք է որոշակի ժամանակում յայտարարի, թէ 2013-ին սատարելու է Սերժ Սարգսեանի թեկնածութիւնը, կամ դուրս գայ կոալիցիայից: Աւելի ուշ Նախագահականում հասկացել են, որ ուլտիմատումը կարող է բացասական ազդեցութիւն ունենալ, հնարաւոր է ոչ ցանկալի որոշում կայացուի, ու որոշել են մեղմել վերաբերմունքը, աւելի ճիշդ՝ սառեցնել ուլտիմատումը: Ի դէպ, մեզ յայտնի դարձաւ, որ վերջին շաբաթուայ ընթացքում Գագիկ Ծառուկեանը հանդիպել է Սերժ Սարգսեանի հետ: Շրջանառուող տեղեկութիւններով՝ ԲՀԿ ղեկավարը որոշել է «ոչ» ասել Սերժ Սարգսեանի թեկնածութիւնը սատարելու պահանջին, մինչեւ չաւարտուեն 2012-ի խորհրդարանական ընտրութիւնները:*

*«Ես նման տեղեկութիւններ չունեմ, մեզ որեւէ ուլտիմատում չի եղել»,- մեր հարցին ի պատասխան յայտարարեց Գագիկ Ծառուկեանի մամուլի խօսնակ Խաչիկ Գալստեանը՝ շարունակելով. «ԲՀԿ որդեգրած ուղեգիծը հետեւեալն է. մենք յայտարարել ենք, որ պատրաստւում ենք խորհրդարանական ընտրութիւններին: Մինչեւ 2012 թիւը ստորագրուած է կոալիցիոն համաձայնագիր ԲՀԿ, ՀՀԿ եւ ՕԵԿ-ի միջեւ, եւ խորհրդարանական ընտրութիւններից յետոյ միայն, երբ պարզ կը լինեն արդիւնքները, երբ նոր քաղաքական քարտէզ կը ձեւաւորուի, երբ իւրաքանչիւր քաղաքական ուժ կը ստանայ ժողովրդի համապատասխան քուէն, նոր կարելի է քննարկել հետագայ քայլերը: Չէ որ խորհրդարանական ընտրութիւններից յետոյ երկրում միգուցէ նոր կոալիցիա ձեւաւորուի»:*

## «ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹԻՒՆԸ» ՈՒՆԻ ՀԱԶԱՐ ԱՋԱԿԻՑ

*Մօտ 20 հազար քաղաքացի դրական կարծիք է յայտնել ժողովրդական հեռուստատեսութիւն ստեղծելու գաղափարին եւ խորհրդանշական գումար փոխանցել: Նախնական տուեալներով՝ ստացուած գումարը կազմում է մօտ 3.5 միլիոն դրամ: Այս մասին լրագրողների հետ հանդիպման ժամանակ յայտարարեց «Ա1+»-ին սատարող ժողովրդական հեռուստատեսութեան հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ, Երեւանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նաւասարդեանը: Նա նշեց, որ դրամահաւաքն իրականացուելու է մինչեւ այս տարուայ վերջը:*




*Բորիս Նաւասարդեանը՝ խօսելով ժողովրդական հեռուստատեսութիւն ձեւաւորելու գաղափարի մասին՝ նշեց, որ Հայաստանի հեռուստալսարանն այդքան էլ գոհ չէ իրեն մատուցուող հեռուստատեսային արտադրանքից, իսկ հեռուստաեթերը շարժւում է մի ճանապարհով ոչ միայն քաղաքական, այլ նաեւ զուտ բովանդակութեան առումով:*

*Նրա խօսքով՝ հասարակութիւնը այդքան էլ լաւ չի պատկերացնում, թէ ինչ պէտք է ակնկալի հեռուստատեսութիւնից, մանաւանդ, որ Հայաստանի մարզերում հեռուստատեսութիւնը շատերի համար տեղեկատուութեան միակ աղբիւրն է: Ըստ Նաւասարդեանի՝ այստեղից էլ ծնուել է ժողովրդական հեռուստատեսութիւն ստեղծելու գաղափարը, որը կարող է նաեւ գբաղեցնել «Ա1+»-ի եթերի մի մասը:*

*Նշելով, որ բազմաթիւ երկրներում քաղաքացիները վճարում են հանրային հեռուստատեսութիւն ունենալու համար՝ Նաւասարդեանն ընդգծեց. «Եթէ, իրօք, ժողովուրդն ու հասարակութիւնը ցանկանում է ունենալ այն, ինչ ինքն այսօր չունի, պէտք է պատրաստ լինի ինչ-որ ձեւով աջակցել այդ կարգի հեռուստատեսութեանը»:*

*Խորհրդի անդամ Լեւոն Բարսեղեանն էլ ասաց, որ «որոշում կայացնողները յաճախականութիւնը կը տրամադրեն այն հեռուստաալիքին, որը հնարաւորութիւն ունի այդ ալիքը իսկապէս դարձնել իսկապէս ժողովրդական»:*

*«Կը յաղթի «Ա1+»-ը, թէ՝ ոչ, դա ազդեցութիւն չի ունենայ գործընթացի վրայ, որովհետեւ «Ա1+»-ն այսօր էլ եթերում է ինտերնետ-հեռարձակմամբ: Սակայն ես համարում եմ, որ ժամանակից շուտ է հրաժարուել եթերից, յաճախութիւնից, եւ մեր պայքարը շարունակւում է: Ես լուրջ յոյսեր ունեմ, որ յաղթելու ենք եւ այս պատուէրն արդէն կը լինի եթերում»,-ասաց Մովսէսեանը:*

## ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒԵՑ ՔԱՂԲԱՆՏԱՐԿԵԱԼ ԳԱԲՐԻԷԼ ԳԱԲՐԻԷԼԵԱՆԸ

*Արդարադատութեան նախարարութեան «Դատապարտեալների հիւանդանոց» քրէակատարողական հիմնարկից Դեկտեմբեր 6-ին ազատ արձակուեց քաղբանտարկեալ Գաբրիէլ Գաբրիէլեանը: Նա ձերբակալուել էր 2008թ. մարտմէկեան դէպքերից յետոյ եւ զանգուածային անկարգութիւններ կազմակերպելու մեղադրանքով դատապարտուել 7 տարուայ ազատազրկման:*

*Գաբրիէլեանին դիմաւորելու էին եկել հարազատները, ընկերները, ընդդիմութեան ներկայացուցիչները:*

*ՀՀ առաջին նախագահի մամլոյ խօսնակ Արման Մուսինեանը Tert.am-ի հետ զրոյցում նշեց, որ ՀՀ իշխանութիւնները քաղբանտարկեալներին ազատ են արձակում միջազգային հանրութեան եւ հայ հասարակութեան ճնշումների ներքոյ: «ՀԱԿ -ը վստահ է, որ առաջիկայում մնացած 10 քաղբանտարկեալներն էլ ազատ կ'արձակուեն»,- ասաց Մուսինեանը: կարձակվեն»,- ասաց Մուսինեանը:*

# ԼՈՒՐԵՐ

## ԵՐԵՒԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ Է ՏՈՒԵԼ

*Դեկտեմբերի 8-ին Երեւանի քաղաքապետ Գագիկ Բեգլարեանը դիմում է ներկայացրել Երեւանի քաղաքապետի պաշտօնից իր հրաժարականի մասին: Այս մասին ասւում է Երեւանի քաղաքապետարանի տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերի վարչութեան տարածած հաղորդագրութեան մէջ:*

*Աւելի վաղ Հայաստանի նախագահի մամլոյ խօսնակ Արմէն Արզումանեանն «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ըստ էութեան հաստատեց, որ Երեւանի քաղաքապետ Գագիկ Բեգլարեանը ծեծի է ենթարկել Սերժ Սարգսեանի արարողակարգի բաժնի աշխատակից Արամ Կանդաեանին:*

*«Այո, ցաւօք, միջադէպ տեղի ունեցել է: Սակայն, մամուլը դէպքերի նկարագրութեան մէջ դրանք չափազանցրել է: Մասնաւորապէս, չի եղել ոչ առեւանգում, ոչ էլ դաժան ծեծ: Բայց այդպիսի դէպք, իսկապէս, տեղի ունեցել է», - ասաց Արզումանեանը:*

*Արմէն Արզումանեանը «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեց, որ նախագահը բազմիցս արտայայտել է իր յստակ դիրքորոշումը նմանօրինակ արարքների վերաբերեալ:*

*«Այսինքն՝ այդպիսի վարքագիծն անընդունելի եւ անհանդուրժելի է, իսկ պետական պաշտօնեայի դէպքում՝ առաւել եւս», - յաւելեց ՀՀ նախագահի խօսնակը:*

*Խօսքը վերաբերում է վերջին օրերին մի շարք լրատուամիջոցներով եւ սոցիալական ցանցերով տարածուած լուրերին այն մասին, որ քաղաքապետ Գագիկ Բեգլարեանը հանդիպել եւ ծեծի է ենթարկել Արմէն Կանդաեանին, քանի որ Դեկտեմբերի 3-ին Կարէն Դեմիրճեանի անուան մարզահամերգային համալիրում օպերային երգիչ Պլասիդօ Դոմինգոյի համերգից առաջ Կանդաեանը խնդրել է նախագահ Սերժ Սարգսեանի համար նախատեսուած աթոռի հարեւանութեամբ նստած Գագիկ Բեգլարեանի կնոջը փոխել իր տեղը:*

## «ՈՒԻՔԻԼԻՔՍԻ» ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՉԿԱՅ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՈՐԵՒԷ ԿԱՌՈՅՑ

*«Ուիքիլիքս» ինթըրնեթային կայքէջը կը շարունակէ հրապարակել Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղարութեան գաղտնի փաստաթուղթերը: Կայքէջին վրայ հրապարակուած փաստաթուղթի մը համաձայն, Հայաստանի մէջ չկայ որեւէ կառոյց, որ կենսական է ԱՄՆ-ի ազգային շահերու տեսանկիւնէն:*

*Փաստաթուղթին մէջ նշուած է աշխարհի տարբեր երկիրներուն մէջ սփռուած այն կառոյցներու ցանկը, որոնք ամերիկացի դիւանագէտներու գնահատմամբ, կենսական են ամերիկեան ազգային շահերուն:*

*Ցանկը կ՚ընդգրկէ նաւթի խողովակներ, փոխադրամիջոցային եւ հեռահաղորդակցական հանգոյցներ եւ այլ կառոյցներ:*

*Ըստ այդ հրապարակման, 2009-ի Փետրուարին Միացեալ Նահանգներու Պետական Գրասենեակը հրահանգած է արտերկրի մէջ գտնուող ամերիկեան դիւանագիտական ներկայացուցչութիւններուն՝ կազմել Միացեալ Նահանգներու ազգային շահերուն համար կարեւորութիւն ներկայացնող կառոյցներու ցանկը, ինչ որ կատարուած է:*

*Հայաստանի դրացի երկիրներուն մէջ յիշուած է Ատրպէյճանով, Վրաստանով ու Թուրքիայով անցնող Պաքու-Թբիլիս - Ջէյհան նաւթամուղը, Պաքուի մօտ գտնուող Սանգաչալի նաւթային կայանը, Թուրքիոյ մէջ գտնուող Պոսֆորի նեղուցը եւ Իրանի մէջ՝ Հորմուզի նեղուցը:*

## «ՀԱՅԵՐԸ ԿՈՏՈՐՈՒԵԼ ԵՆ ՄԵՐ ՁԵՌՔՈՎ».- ԽՈՍՏՈՎԱՆՈՒՄ ԵՆ ՔՈՒՐԴ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

*1915թ. երիտթուրքերը հայերին կոտորելու համար որպէս գործիք՝ օգտագործել են քրդերին: Այս մասին, թուրքական «Սապահ» օրաթերթի փոխանցմամբ, Ստամբուլում յայտարարել է Դիարբէքիրի առեւտրաարդիւնաբերական պալատի (ԱԱՊ) նախագահ, ազգութեամբ քուրդ Գալիփ Էնսարիօղլուն:*

*«Որպէս հանրութիւն՝ մենք էլ ունենք մեր մեղքի բաժինը: Երբ իթթիհատականները ցանակնում էին ձեւաւորել ազգային պետութիւն, մենք՝ քրդերս, գործիք դարձանք նրանց ձեռքին: Այդ ժամանակահատուածում այս հողերի վրայ ապրող բնակչութեան 25%-ը ոչ մահմեդականներ էին: Հայերին կոտորեցին մեր ձեռքով»,- յայտարարել է Էնսարիօղլուն:*

*Անդրադառնալով քրդական հարցին՝ Դիրաբէքիրի ԱԱՊ նախագահն ընդգծել է, որ այդ հարցը «այլեւս ոչ միայն քրդերինն է, այլ բոլոր նրանցը, ովքեր ապրում են Թուրքիայում»:*

*«Զաման» թերթը իր կարգին գրում է որ, լաւ յայտնի է, որ քրդական ցեղերը մասնակցութիւն են ունեցել հայերի 1915 թուականի ջարդերին:*

*«Իշխանութիւնների հետ համագործակցող քուրդ հոգեւորականները խոստացել են, որ ցանկացածը, ով կը սպաննի անհաւատին, կը պարգեւատրուի երկնային 700 սենեականոց 700 առանձնատներով, ասել է Դիարբէքիրի իսլամական շէյխ Մալա Խադին: Նա քրդական շրջանի՝ քրիստոնեաների հետ հաշտուող մի հատուածի առաջնորդ է: «Մենք պատրաստ ենք նայել անցեալի երեսին, ճանաչել մեր մեղքը»,- ասել է Դիարիբէքիրի Սուր շրջանի քաղաքապետ Աբդուլա Դեմիրբաշը: Մեղքը քաւելու համար նա Դեմիրբաշը գումարներ է տրամադրել Սուրի քրիստոնէական յուշարձանների վերականգնման համար, դրանց թւում՝ հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցու:*

### ԹՈՒՐՔ ԴԻՒԱՆԱԳԷՏԻ ԱՊՇԵՑՈՒՑԻՉ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ

## «ԱՄԵՆԱԵՐԿԴԻՄԻ, ԱՄԵՆԱԱՆՎՍՏԱՀԵԼԻ ԵՐԿԻՐՆ ԱԴՐԲԵՋԱՆՆ Է»

*Ադրբեջանն աշխարհում այն միակ երկիրն է, որն ամենաքիչն է վստահում թուրքերին: Այս մասին թուրքական «Թարաֆ» օրաթերթին տուած հարցազրոյցում յայտարարել է թուրքական դիւանագիտական կորպուսի վետերաններից, Փարիզում եւ Բրիւսելում Թուրքիայի նախկին դեսպան Թեմել Իսքիթը:*

*Հարցազրոյցի ընթացքում թուրք պաշտօնաթող դեսպանը, ով 41 տարի շարունակ աշխատել է Թուրքիայի արտաքին քաղաքական գերատեսչութիւնում՝ տարբեր դիւանագիտական պաշտօններ զբաղեցնելով Իրանում, Հռոմում, Փարիզում, Բրիւսելում եւ աշխարհի մի շարք այլ երկրներում, մասնաւորապէս խօսել է թուրքական արտաքին քաղաքականութեան եւ WikiLeaks-ի կողմից հրապարակուած գաղտնի փաստաթղթերի բովանդակութեան մասին:*

*Ի պատասխան այն հարցի, թէ «Թուրքիան յանուն Ադրբեջանի վիժեցրեց Հայաստանի հետ յարաբերութիւնների կարգաւորման գործընթացը: Իսկ WikiLeaks-ի հրապարակումների արդիւնքում պարզ դարձաւ, որ ադրբեջանցիներն ամենեւին էլ բարեկամաբար տրամադրուած չեն Թուրքիայի հանդէպ: Աւելի վաղ Թուրքիան իմացե՞լ է այդ իրողութեան մասին», Թուրք դիւանագէտը յայտարարել է.*

*«Մենք միշտ էլ իմացել ենք այդ մասին: Թէ Թուրքիայի կառավարութիւնը, թէ արտգործնախարարութիւնը միշտ էլ տեղեակ են եղել դրանից: Ես 2-3 տարի շարունակ ընդգրկուած եմ եղել Բաքու-Ջէյհան նաւթամուղի շուրջ ընթացող բանակցութիւններում եւ պէտք է ասեմ, որ մեր հանդէպ ամենաքիչ վստահութիւն տածող, ամենաքիչ բարեկամական մօտեցումը ցուցաբերող, ամենաշատ նեղութիւններ պատճառող եւ երկդիմի քաղաքականութիւն իրականացնող երկիրն Ադրբեջանն է: Այդ պետութիւնը Թուրքիային երբեք չի աջակցել տարածաշրջանային այնպիսի համագործակցութիւններում, ինչպիսին է, օրինակ, Սեւծովեան տնտեսական համագործակցութեան կազմակերպութիւնը: Ադրբեջանը միշտ էլ դիմացից ժպտացել է Թուրքիային, իսկ ետեւից՝ հրաժարուել խոստացած աջակցութիւնից»:*

*Իսկ «Թարաֆի» այն դիտարկմանը, թէ «Այդ ամէնն իմանալով հանդերձ, սակայն, ոչ Թուրքիան, ոչ էլ Ադրբեջանը չեն հրաժարւում «Մէկ ազգ, երկու պետութիւն» կարգախօսից: Ի՞նչն է պատճառը, որ Ադրբեջանի քաղաքականութիւնը չի ազդում թուրք-ադրբեջանական դիւանագիտական յարաբերութիւնների վրայ», Թեմել Իսքիթը պատասխանել է.*

*«Պատճառը պոպուլիզմն է... յիշո՞ւմ էք, ԽՍՀՄ-ի փլուզումից յետոյ մի պահ խենթացել էինք: Խօսում էինք թուրքական հանրապետութիւնների մասին: Մարդիկ ծիծաղում էին՝ ասելով. «Ռուսներից յետոյ հիմա էլ դո՞ւք յայտնուեցիք»: Ադրբեջանը մեր հանդէպ ինչպիսի երկդիմի քաղաքականութիւն էլ իրականացնի, մէկ է, մենք շարունակելու ենք ամէն բանի առջեւ խոնարհուել ներքաղաքական ազգայնական շահերի եւ քուէներ հաւաքելու պատճառով: Շարունակելու ենք աջակցել նրան, շարունակելու ենք զէնք վաճառել: Ադրբեջանի՝ որպէս պետութիւն կայանալու մէջ մենք էլ մեր բաժինն ունենք»:*

## ՀԱՅԱՍՏԱՆ ԸՆԴՈՒՆԱԾ Է

*Շարունակուած էջ 1-էն*

*գանոնք ներկայացնելով Յակոբեանին եւ ապա Սերժ Սարգսեանին:*

*ԱԱԾ պետ Գորիկ Յակոբեան ընդունած է որ, 2003 թուականի Պուլկարիայէն գնուած 1000 հատ «RPG» ականանետերու եւ 260 «PKM» գնդացիրներու վաճառքի փաստաթուղթերուն տակ ստորագրած է այդ ժամանակուայ պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանը, խոստանալով որ այդ զէնքերը այլ երկիր պիտի չի փոխադրուին: Յակոբեան պատրաստակամութիւն յայտնած է քննութիւն կատարել այդ ուղղութեամբ: Ան միաժամանակ յայտնած է, որ անցնող տարիներու ընթացքին զգալի փոփոխութիւններ տեղի ունեցած են Հայաստանին մէջ:*

*Ամերիկացիները նաեւ պնդած են, որ իրենց ունեցած տեղեկութիւններուն համաձայն, վաճառքի գումարը իրանական ընկերութեան մը կողմէ, հայկական դրամատան մը միջոցով փոխանցուած է Պուլկարիա:*

*Սերժ Սարգսեանի հետ հանդիպման ընթացքին, Մահլի խօսած է ԱՄՆ-ի հետ փոխըմբռնման յուշագիր ստորագրելու հարցով: Հայաստանի նախագահը պատրաստակամութիւն յայտնած է համագործակցիլ Միացեալ Նահանգներու հետ արտահանումը վերահսկելու հարցով եւ շեշտած է, որ Հայաստանի կառավարութիւնը Իրանի հետ զէնքի առեւտրով զբաղուելու հարցով հետաքրքրուած չէ:*

*«Մենք գիտենք, որ ստացած ենք այդ զէնքերը: Մենք կը պարզենք, թէ ինչպէս այդ զէնքերը փոխանցուած են Իրանին եւ ձեզ տեղեակ կը պահենք», դեսպան Մահլիի վստահեցուցած է Սերժ Սարգսեան:*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՒԵՐԻՉ ԵՐԿՐԱՇԱՐԺ

*Շարունակուած էջ 1-էն*

*ուած շրջանները: Սակայն, հակառակ մեծածաւալ աշխատանքներու եւ միջազգային լայն աջակցութեան, աղէտի գօտիի վերականգման խորհրդային ծրագիրը չիրականացաւ, յատկապէս որ կարճ ժամանակ ետք փուլ եկաւ խորհրդային պետութիւնը:*

*Հայաստանի անկախացումէն յետոյ, աղէտի գօտիի վերացման աշխատանքները առաւել դժուարացան եւ 22 տարի ետք հազարաւոր ընտանիքները կը շարունակեն մնալ առանց բնակարանի:*

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք**

**«Մասիս» Շաբաթաթերթին**

**T: (626) 797-7680 F: (626) 797-6863**

**massis2@earthlink.net**

# ԱՐԱ ԳՈՉՈՒՆԵԱՆ.- «ԱԹՈՌԱԿԻՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԿԱՐՈՂ Է ՎՏԱՆԳԵԼ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ»



*Գործնականում Պոլսոյ հայոց պատրիարքարանի աթոռը թափուր է, ընթանում են պատրիարքական աթոռի նոր գահակալի որոնումներ եւ այդ որոնումների հետեւանքով պառակտում է ի յայտ եկել հայ համայնքի ներսում: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում ասաց Ստամբուլում լոյս տեսնող «Ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Արա Գոչունեանը: Նա յիշեցրեց, որ պատրիարքի աթոռի շուրջ իրարամերժ տեսակէտներ են ի յայտ եկել. համաձայն առաջին տեսակէտի՝ պէտք է ընտրել նոր պատրիարք, քանի որ ներկայիս պատրիարքը՝ Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանը 3,5 տարի է՝ չի կարողանում իրականացնել պատրիարքի իր առաքելութիւնը, իսկ միւս տեսակէտի համաձայն՝ պէտք է ընտրել աթոռակից պատրիարք:*

*«Մեր խորին համոզմամբ աթոռակից պատրիարքի ընտրութիւնը Թուրքիայում կարող է վտանգել մեր՝ որպէս ազգային փոքրամասնութեան իրաւունքները: Բացի դրանից Ստամբուլում հայութեան կարեւոր շրջանակները վերապահում ունեն այդ ուղղութեամբ, որովհետեւ աթոռակից պատրիարք ընտրելը չունի նախադէպ Թուրքիայի հայոց պատրիարքութեան պատմութեան մէջ: Այս պայմաններում՝ պատրիարք ընտրելու համար Թուրքական կառավարութեան թոյլտուութիւնը ստանալու համար երկու դիմում է ներկայացուել, Պետութիւնը, սակայն, երկու իրարամերժ դիմումներից ոչ մէկին էլ ընթացք չտուեց, այլ միջանկեալ կարգավիճակ շնորհեց աթոռի ղեկավարութեանը»,-ասաց Գոչունեանը: Նրա դիտարկմամբ՝ ստեղծուել է անառողջ մի իրավիճակ, որը երկար տեւել չի կարող, «քանի որ եթէ աթոռը չափից աւելի երկար է թափուր մնում եւ գահակալ չի ունենում, այն, այսպէս ասած՝ մաշւում է»:*

*Արա Գոչունեանը նշեց նաեւ, որ պատրիարքի աթոռի շուրջ ի յայտ եկած թնջուկը պէտք է լուծուի կրօնական ժողովի միջոցով, որը ստանձնել է պատրիարքարանի ղեկը՝ ընդհանուր փոխանորդ սրբազան Արամ Աթէշեանի գլխաւորութեամբ: «Կրօնական ժողովն արդէն իսկ կայացրել է պատրիարքի ընտրութիւն կատարելու մասին որոշում, սակայն դրժել է այն՝ նոր ընտրութեան նշանակումը պայմանաւորելով Մեսրոպ Մութաֆեանի վախճանով: Սա էթիկայի իմաստով շատ սխալ է, որ աթոռի վերաբերեալ վարչական խնդրի լուծան հեռանկարը կախուածութեան մէջ դրուի պատրիարքի կեանքի օրերի հետ»,- նկատեց Գոչունեանը: «Ժամանակ»-ի խմբագիրը միաժամանակ յաւելեց, որ Կրօնական ժողովը չպէտք է դրժի իր որոշումը եւ պէտք է առիթ ստեղծի, որ ժողովուրդը գնա պատրիարքական ընտրութեան եւ իր կամքն արտայայտի:*

*Նշենք, որ ներկայիս Պոլսոյ պատրիարք Մեսրոպ 2-րդ Մութաֆեանը անկողնային հիւանդ է: Ստամբուլահայ համայնքի մի մասը կարծում էր, որ պէտք է ընտրուէր համապատրիարք, քանի որ պատրիարք կարող է ընտրուել միայն նախկին պատրիարքի մահուան դէպքում: Ստամբուլահայերի միւս մասն էլ պնդում էր, թէ ոչ թէ համապատրիարք, այլ՝ պատրիարք պէտք է ընտրել: Այս խօսակցութիւնները թէժ քննարկւում էին, երբ Թուրքական կառավարութիւնը յայտարարեց իր որոշումը, որով պարզապէս նշանակուեց փոխպատրիարք:*

*Յիշեցնենք, որ օրերս Պոլսի հայոց պատրիարքարանը յայտարարութիւն էր տարածել, որում նշել է, թէ Թուրքական պետութիւնը հայկական համայնքին չի զրկել հոգեւոր հովիւ ընտրելու իրաւունքից: «Շրջանառուող այն լուրերը, թէ պետութիւնը փորձում է հայկական համայնքին զրկել իր հոգեւոր առաջնորդին ընտրելու իրաւունքից, անհիմն են ու չեն համապատասխանում իրականութեանը: Ներկայիս պատրիարք Մեսրոպ Մութաֆեանի մահուանից յետոյ, նոր առաջնորդը կ՚ընտրուի այնպէս, ինչպէս դա եղել է մինչեւ հիմա՝ պատրիարքարանի կարգերին ու աւանդոյթներին համաձայն: Այս հարցում ոչ մի փոփոխութիւն քննարկման ենթակայ չէ»,- ասուած է յայտարարութեան մէջ:*

*Ինչպէս արդէն նշել է NEWS.am-ը, ստամբուլահայերի մի մասը, որը դէմ է Թուրքական կառավարութեան որոշմանը, որով ներկայիս հիւանդ պատրիարք Մեսրոպ Մութաֆեանի տեղը նոր պատրիարք ընտրելու փոխարէն նշանակուել է հայկական եկեղեցու կանոնակարգում գոյութիւն չունեցող փոխպատրիարք հասկացութիւնը, հաւաքել է 5 հազար 359 ստամբուլահայի ստորագրութիւն:*

# ԹՈՒՐՔ ԳՐՈՂԸ ԶԱՐԱՔՕՂԼՈՒՆ ԵՒՍ ԿԸ ՊԱՀԱՆՋԷ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆԻՆ

*Գանատայի մէջ գործող «Keghart.com» կայքէջին վրայ տեղադրուած է յայտարարութիւն մը, ուր հայ եւ օտար մտաւորականներ, հեղինակաւոր հասարակական եւ մշակութային գործիչներ կը պահանջեն ազատ արձակել «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեանին:*



Թուրք գրող Ռագէփ Զարաքօղլուն

*Յայտարարութիւնը արդէն ստորգարած են 231 հոգիներ, որոնց շարքին է նաեւ յայտնի Թուրք իրաւապաշտպան, գրող, հրատարակիչ Ռագէփ Զարաքօղլուն:*

*Ռագէփ Զարաքօղլուն Հայոց Ցեղասպանութեան թեմայով երկու գիրք հրատարակած է, Թրքական իշխանութիւններուն կողմէ եմթարկուած է հետապնդման: Ան Ֆրանց Վերֆելի «Մուսա Լեռան 40 Օրը» պատմավէպը թարգմանելու եւ իրեն պատկանող «Բելգէ» տպարանէն հրատարակելու համար, կնոջ հետ միասին 2007-ի Յունիսի «Թրքական ինքնութիւնը վիրաւորելու համար» տխրահռչակ 301 յօդուածով դատապարտուած է 6 ամսուայ ազատազրկման:*

*Նոյն տարին Թուրքիոյ մէջ խօսքի ազատութեան ամրապնդման ու իրաւապաշտպան գործունէութեան համար Ռագըփ Զարաքօղլու արժանացած է «Մամուլի Ազատութիւն-2007» մրցանակին, որուն աւելի ուշ յետմահու արժանացած է «Ակօս» թերթի խմբագիր Հրանդ Դինքը:*

*Նիկոլ Փաշինեանի ազատ արձակումը պահանջող յայտարարութեան մէջ ըսուած է.-*

*«Մենք սփիւռքաբնակ հայերս եւ մեր ոչ հայազգի ընկերները, խորապէս անհանգստացած ենք «Հայկական Ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեանի հետ կալանավայրի մէջ կատարուող դէպքերով: Կը թուէր թէ արդարադատութեան մարմիններուն անոր կամովին ներկայանալը համապատասխան վերաբերմունքի պիտի արժանանար ՀՀ իշխանութիւններու կողմէ: Սակայն, ոչ միայն այդ տեղի չունեցաւ, այլեւ, ազատազրկման վայրին մէջ, անոր նկատմամբ հետեւողական ճնշում կը կիրառուի, ալեկոծելով հայ հասարակութիւնը ամէնուրեք: Մենք կը հաստատենք թէ իշխանութիւններու՝ Նիկոլ Փաշինեանի ազատ խօսքը լռեցնելու եւ քաղաքական տեսակէտներու համար պատիժ կիրառելու այս դատապարտելի գործողութիւնները ճիշդ հակառակ արդիւնքը կ՛ունենան, աւելի եւս լսելի դարձնելով Նիկոլ Փաշինեանի ձայնը թէ՛ Հայրենիքի եւ թէ՛ Սփիւռքի մէջ: Անոր ճակատագրով խորապէս մտահոգ ըլլալով, մենք ուշադրութեամբ կը հետեւինք այս հարցին շուրջ տեղի ունեցող զարգացումներուն եւ յոյս ունինք գայն շուտով տեսնել ազատ արձակուած: Մինչ այդ, կը պահանջենք վերջ տալ Նիկոլ Փաշինեանի նկատմամբ գործադրուող բոլոր տեսակի անօրինական գործողութիւններուն եւ ապահովել անոր անվտանգութիւնը»:*

# «ՂԱՐԱԲԱՂԸ ԱՊԱԳԱՅ ՉՈՒՆԻ ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ԿԱԶՄԷՆ ՆԵՐՍ»

*Շարունակուած էջ 1-էն*

*եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը: Ատրպէյճանի կողմից էթնիկական զտումների քաղաքականութեան եւ Ինքնորոշուած Ղարաբաղի դէմ 1992 թուականին սանձազերծուած զինուած ագրեսիային ի պատասխան, Լեռնային Ղարաբաղը՝ չճանաչուած, բայց լեգիտիմ պետութիւնը, ոչնչացման վտանգի առջեւ կանգնած ժողովրդին փրկելու համար պարտադրուած եղաւ դիմել ինքնապաշտպանութեան, ինչը ամբողջութեամբ համապատասխանում էր միջազգային իրաւունքի նորմերին», - ընդգծած է Հայաստանի ղեկավարը:*

*Շարունակելով Սարգսեան եզրակացուցած է, «Ատրպէյճանի փորձերը՝ ուժի սպառնալիքով կորցելու միակողմանի զիջումներ, ոչ միայն ի սկզբանէ դատապարտուած են ձախողման, այլեւ շարունակում են մնալ փոխզիջումային տարբերակով խնդրի կարգաւորման հիմնական խոչընդոտը: Իսկ վերջին մէկ շաբաթուայ մէջ ես կրկին համոզուեցի, որ այս փուլում Ատրպէյճանը հետաքրքրուած չէ Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի լուծմամբ: Նրա միակ նպատակը Հայաստանին առաւելագոյն վնաս հասցնելն է»:*

*ԵԱՀԿ Գագաթի ժողովի աւարտին ընդունուած հռչակագրին մէջ ըսուած է որ, առաւել ջանք պէտք է գործադրուի ԵԱՀԿ գօտիէն ներս հակամարտութիւնները խաղաղ ճանապարհով եւ բանակցային մեթոտով՝ համաձայնեցուած ձեւաչափերու շրջագիծէն ներս լուծելու համար՝ ամբողջովին յարգելով միջազգային իրաւունքի նորմերը եւ սկզբունքները, որոնք ամրագրուած են ՄԱԿ-ի կանոնադրութեան մէջ:*

*Աստանայի ժողովի ընթացքին նախատեսուած էր նաեւ Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարներուն միջեւ հանդիպում, սակայն ան տեղի չունեցաւ Իլհամ Ալիեւի մերժումին պատճառաւ:*

ArmenienInfo.net
News. Informationen. Kommentare.
massispost.com

Հայ news am

## ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՆ «ԻՍԼԱՄԱՑԱԾ ՀԱՅԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ»



*Ուրբաթ 3 Դեկտեմբեր 2010, երեկոյեան ժամը 8ին, խուռներամ բազմութիւն մը մէկտեղուած էր Լոս Անճելոս Պոլսահայ Միութեան նորակառոյց ակումբի «Հրանդ Տինք» սրահը, լսելու շահեկան բանախօսութիւն մը, փրոֆ. Պարէտ Մանուքի (Մանուկեան) կողմէ:*

*Ձեռնարկի կազմակերպիչ Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբի եւ Արարատ Տան Էսքիճեան Թանգարանի անունով բացման խօսքը կատարեց Տօքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեան: Ան ողջունելէ ետք ներկաները, հանգամանօրէն ներկայացուց օրուան բանախօսը փրանսաբնակ Փրոֆ. Պարէտ Մանուքը, որպէս մասնագէտ արեւելեան լեզուներու եւ գրականութիւններու, նաեւ հեղինակ բազմաթիւ աշխատասիրութիւններու:*

*Աւելի քան մէկ ժամ տեւող իր շահեկան բանախօսութեամբ՝ փրոֆ. Պարէտ Մանուք մասնագէտի հմտութեամբ ներկայացուց ազգի, կրօնի եւ լեզուի սահմանումները: Ան պատմական ակնարկ մը նետելով հայ ժողովուրդի պատմա-աշխարհագրական եւ քաղաքական վերիվայրումներուն վրայ յստակօրէն պարզեց այն պայմաններն ու պարագաները, որոնց հետեւանքով հայեր իսլամացած են դարերու ընթացքին: Փրոֆ. Մանուք նշեց որ հայերու իսլամացումը տեղի ունեցած է գլխաւորաբար երկու պարագաներու տակ: Առաջինը՝ բռնի պարտադրանք, երկրորդը՝ կամաւոր իսլամացում, քաղաքական եւ ընկերային պայմաններու բերումով:*

*Յարգելի բանախօսը առանձնապէս նշեց իրենց իսկական հայ արմատներուն վերադարձող իսլամացած հայերու այժմու պարագան: Գալով Թուրքիոյ Համշէնցի հայերուն՝ անոնք եւս չեն ուրացած իրենց հայ արմատները: Անոնց թիւը՝ կրնար 2 միլիոնի հասնիլ, եթէ դարերու ընթացքին հալածանքներու եւ տեղահանութիւններու չենթարկուէին:*

*Փրոֆ. Պարէտ Մանուք բնաւ չանդրադարձաւ այն իսլամացած հայերու մասին, որոնք դաւանափոխ եղած են Եգիպտոսի, Սուրիոյ եւ այլ երկիրներու մէջ, որոնցմէ շատեր տիրացած են բարձր պաշտօններու:*

*Տակաւին կայ հարցին միւս երեսը՝ քիչ չէ թիւը այն այլազգիներուն՝ ասորի, եզիտի, լազ եւ այլն որոք լքած են իրենց ազգային դաւանանքն ու վերադարձած են հայ ժողովուրդի գիրկն ու ընդունած քրիստոնէութիւնը:*

*Յայտագրի աւարտին ցուցադրուեցան քանի մը կարճամեթրաժ վաւերագրական տեսաերիզներ, որոնց մէջ ուշագրաւ էին Այնթուրայի (Լիբանան) Սէն Ժօզէֆ գոլէճի հայ որբուկներու ապրած ողիսականի մասին (1911-1944), Համշէնէն Թրքացած հայուհիի մը մեներգը (իւրայատուկ բարբառով) եւ Տէրսիմի հայերը:*

*Յամենայն դէպս խիստ հետաքրքրաշարժ երեկոյ մըն էր: Յառաջիկային կարելի է գիտական սեմինար մը կազմակերպել վերոյիշեալ նիւթերու շուրջ:*

## 2011-Ը «ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ» ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԷՆ ՆԵՐՍ

Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Սրբազան Առաջնորդ՝ Գերշ. Յովնան Արք. Տէրտէրեան, նկատի առնելով, որ եկեղեցին, բացի հաւատացեալներէն կազմուած է նաեւ եկեղեցականներէ, նկատի առնելով որ Արեւմտեան Թեմի մէջ մեծ նուիրումով կը ծառայեն 50է աւելի եկեղեցականներ, նկատի ունենալով նաեւ եկեղեցականներու Քահանայագործութեան բարձր հանգամանքը, արժէքը, կարեւորութիւնը եւ անոր սրբազան դերը հոգեւոր սպասաւորութեան տեսակէտէն, 2011 տարին կը հռչակէ »ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ«:

Թեմակալ Սրբազանը ծրագրած է 2011ի ընթացքին, զանազան առիթներ ստեղծելով, յաճախակիօրէն անդրադառնալ Քահանայութեան աստիճանի բարձրութեան եւ անոր կարեւորութեան, ինչպէս նաեւ Քահանայական կեանքը վերաժեւորել՝ քննութեան եւ գնա-հատանքի առարկայ դարձնելով:

Այս առիթով Գերաշնորհ Սրբազանը յատուկ Գիր յղած է Արեւմտեան Թեմի բոլոր եկեղեցականներուն, տեղակ պահելով իր յայտարարութիւնը, ծրագիրը, միաժամանակ հանգամանօրէն անդրադառնալով Քահանայական կեանքի իրականութեան եւ արժէքին:




## ՔՐԻՍ ԽԱՉԻԿ ՇԱՀԻՆԵԱՆ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ ԹԵԿՆԱԾՈՒ

Յառաջիկայ տարուայ Մարտ 8ը նշանակելի օր մը պիտի ըլլայ Փասատինա քաղաքին համար՝ Քաղաքային Խորհուրդի ընտրութեանց պատճառով:

Բացայայտ ճշմարտու.թիւն է, կ'ըսէ թեկնածու Խաչիկեան, որ կառավարութիւնը կը լսէ այն համայնքները, որոնք կը մասնակցին քուէարկութեան: Ուրեմն, եթէ մենք չքուէարկենք, մեր ձայնը լսելի չըլլար: Հետեւաբար, եթէ մեր հայ համայնքը կը փափաքի հեղինակութիւն մը ունենալ մեզ հետաքրքրող որոշումներուն մէջ, պէտք է մասնակցինք քուէարկութեանց:

Ձեր ձայները լսելի դարձուցէք, ի գործ դրէք ձեր իրաւունքները եւ անմիջապէս գրանցուեցէք: Միասնական ուժերով մենք կը յաջողինք:

Երիտասարդ ու կորովի ուժ Խաչիկ Շահինեան իր թեկնածութիւնը դրած է Փասատինայի Քաղքային Խորհուրդի ընտրութեան՝ 4րդ ընտրաշրջանէն ներս: Մեր ձայները կեդրոնացնենք իր անուան շուրջ եւ յաջողցնենք իր ընտրութիւնը:

Պէտք է յիշել հետեւեալ ժամկէտները.

ա. Ուրբաթ, Փետրուար 1-7 վերջին օր թղթատարի միջոցով գրանցուող նոր քուէարկողներու համար:

բ. Երեքշաբթի, Փետրուար 22 մինչեւ ժամը 5:00, վերջին օր նոր գրանցուողներու համար անձամբ ներկայանալու Լոս Անճելոս գաւառի արձանագրութեանց գրասենեակ:

գ. Չորեքշաբթի, Յունուար 12, ժամը 6:30-8:30, Փասատինայ Քաղաքային Խորհուրդի Gidywide թեկնածուի ատեան, վայր՝ La Salle High School5 3880 E. Sierra Madre Blvd., Փասատինա:

դ. Երեքշաբթի, Մարտ 8, առաւօտեան ժամը 7:00էն երեկոյեան 8:00, Փասատինայի Քաղաքային Խորհուրդի եւ Կրթական Հոգաբարձական Կազմի ընտրութիւններ:

Authorized Agent
Blue Shield of California
An Independent Member of the Blue Shield Association
A.B.A. INSURANCE SERVICES
SERVING SINCE 1975
BEDROS S. MARONIAN
(818) 500-9585
CA LIC. #0494056 • BMaronian@AOL.com
FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205
ԵՐԲԵՔ ՈՒՇ ՉԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



# ԳՈՀԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ



*ԼԻՆՏԱ ԳԱՆՏԻԼԵԱՆ*

*Հայ Քոյրերու Վարժարանը իր Քսանհինգամեակի տօնակատարութիւններու շարքին յաջողութեամբ իրականացուց շարք մը ծրագիրներ՝ կազմակերպելով աւանդութիւն դարձած Գոհաբանութեան Օրուան յատուկ ձեռնարկներ, որոնցմէ կարելի է յիշել հետեւեալները:*

*Գոհաբանութեան ընթրիքը, որ տեղի ունեցաւ Շաբաթ Նոյեմբեր 20, 2010ի երեկոյեան:*

*Այս տարի, տնօրէնութիւնը գեղեցիկ մտայղացումը ունեցած էր ընթրիքին հետ ծնողներուն հրամցնելու մշակոյթի վայելք մը՝ հրաւիրելով Համազգայինի «Հայ Ըլլար Ջէ՞ր Ըլլար» Թատրոնը: Գոհաբանութեան ընթրիքը սկսաւ վարժարանիս ծնողաօժանդակ մարմնի ատենապետուհի՝ Տիկ. Վիգի Քիւրքճեանի բարի գալուստի խօսքով: Ան ծանօթացուց այս տարուան ծրագիրները, շնորհակալութիւն յայտնեց օժանդակ մարմնի տիկիններուն եւ բոլոր ծնողներուն, որոնց մասնակցութեամբ կ՚իրականանան վարժարանի բարգաւաճման նպաստող բոլոր ձեռնարկները: Ապա խօսքը փոխանցեց Վարժարանի տնօրէնուհի՝ Առաքինազարդ Քոյր Լուսիային, որ գոհունակութիւն յայտնեց Աստուծոյ, որովհետեւ տարի մը եւս յաջողութեամբ սկսաւ Վարժարանի տարեկան ծրագրին՝ հաւատալով որ նոր նուաճումներով պիտի շարունակէ տարին՝ յաղթահարելով ամէն խոչընդոտ: Ան բացատրեց Գոհաբանութեան Տօնին իմաստը զայն անուանելով՝ ամենագեղեցիկ տօնը, ապա շնորհակալական խօսքեր ուղղելով Տիկնանց Օժանդակ մարմնի անդամներուն, Համազգայինի Թատերական Ցանձնախումբին եւ ներկաներուն՝ խօսքը փոխանցեց իր ներկայութեամբ երեկոն պատուող Հայ Կաթողիկէ համայնքի Փոխ ժողովրդապետ՝ Հայր Արմենակ Պետրոսեանին, որ օրհնեց սեղանները իր հոգեպարար աղօթքով եւ ժողովուրդը հրաւիրեց վայելելու այս մտերմիկ եւ ընտանեկան երեկոյթը:*

*Արդարեւ, վարժարանիս ծնողաօժանդակ Մարմնի բծախնդիր կազմակերպութեամբ, Համազգայինի Թատերգութեան հաճելի ներկայացումով երեկոն դարձաւ մտերմիկ, զուարճալի եւ հայաբոյր:*

*Գոհաբանութեան տօնը նաեւ կը համընկնի քրիստոնէական ամենաազնիւ սկզբունքներէն մէկուն՝ շնորհակալութեան, վարձահատոյց ըլլալու մարդկային կեցուածքին: Ուստի մեկնելով այս սկզբունքէն եւ առարկայացնելով վարժարանիս կրթական նպատակներէն մէկը հանդիսացող՝ քրիստոնէական դաստիարակութիւնը, Հայ Քոյրերու Վարժարանը զայն վերածած է իր գլխաւոր տօներէն մէկուն, որ հանդամանօրէն կը յարգուի եւ կը յիշուի աղօթքներով, Սուրբ Պատարագով, հանդիսութեամբ, ներկայացումով եւ միասնական ընթրիքով:*

*Ուստի, Նոյեմբեր 23ին տեղի ունեցաւ Սուրբ եւ Անմահ պատարագ, մասնակցութեամբ վարժարանի 5-8րդ կարգերու աշակերտներուն, որոնք նաեւ հաղորդուեցան՝ ընդունելով Սուրբ Հոգիի ներկայութիւնը իրենց հոգիներուն մէջ: Օրուան պատարագիչն էր հիւրաբար գաղութս այցելող Հայր Անտոն Սարոյեան, որ մեծ հաճոյքով եւ ուրախութեամբ աշակերտներուն փոխանցեց օրուան պատգամը, կեդրոնանալով շնորհակալութիւն յայտնելու գաղափարին վրայ:*

*Նոյեմբեր 24ի առաւօտեան, սովորական աղօթքի փոխարէն՝ տեղի ունեցաւ յատուկ արարողութիւն Գոհաբանութեան տօնին առիթով: Առաջին դասարանի աշակերտները իրենց ուսուցչուհի Օր. Վարդուհի Մամպրէյեանի առաջնորդութեամբ, Ամերիկացի բնիկներու պէս ծպտուած՝ եկան սրահ, ներկայացուցին Գոհաբանութեան օրուան պատմականը, եւ երգեցին յատուկ երգ մը, ապա ութերորդ դասարանի տղաքը ներկայացուցին օրուան խորհուրդը, որմէ ետք ամէն դասարանէ աշակերտ մը ներկայանալով կատարեց տարուան խնդրանքը եւ եղաւ մոմավառութիւն:*

*Նոյն օրուան կէսօրին տեղի ունեցաւ աշակերտական Գոհաբանութեան աւանդական ճաշը՝ տնօրէնութեան կողմէ մատակարարուած հնդկահաւի հիւրասիրութիւն, որուն մատուցումը կատարեցին Ծնողաօժանդակ մարմնի անդամները, որմէ վերջ աշակերտները ուրախ եւ գոհունակ սրտով վերադարձան իրենց տուները, վարձահատոյց ըլլալու գաղափարը անգամ մը եւս տեսնելով եւ ապրելով իրենց շուրջ, վարժարանի անմիջական մթնոլորտին մէջ:*

*Ամէն տարուան նման այս տարի եւս Հայ Քոյրերու վարժարանի ուսուցչական կազմն ու պաշտօնէութիւնը, համախմբուած վարժարանիս անխոնջ աշխատող եւ անձնուրաց Քոյրերու շուրջ, ըմբոշխնեց պատրաստուած համա-*

*Շար.ը էջ 17*

# ԳՈՀԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ ԱՐՇԱԿ ՏԻԳՐԱՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՑ ՆԵՐՍ

*Թ.Մ.Մ. Արշակ Տիգրանեան վարժարանում Գոհաբանութեան օրուան նուիրուած միջոցառումների շարքը ընթացաւ երեք փուլով: Զորեքշաբթի օրը Նոյեմբերի տասնեօթին վարժարանի ծնողաուսուցչական անձնակազմը կազմակերպել էր հիւրասիրութիւն վարժարանի աշակերտների համար: Տիգրանեանցիները ընտանեկան միասնութեամբ եւ համերաշխութեամբ ճաշի նստեցին՝ վայելելով մեր ջանասէր ծնողների կողմից պատրաստուած համադամ հնդկահաւը: Վարժարանի եւ ուսուցիչների հետ ներկայ էին եւ միասին ճաշում էին վարժարանի հոգաբարձական կազմի ատենապետ Ճորճ Մանտոսեանը, տնօրէն Վարդգէս Գուրուեանը եւ ծնողաուսուցչական անձնակազմը: Համեղ հնդկահաւն ու աղցանները ճաշակելուց յետոյ բոլորը ուրախութեամբ շնորհակալութիւն յայտնեցին ծնողներին, որոնք ջանք չէին խնայել «համեղ օր» մատուցելու մեր աշակերտներին եւ ուսուցչական կազմին:*

### Գոհաբանութեան ճաշկերոյթ-պարահանդէս

*Նոյեմբերի քսանին տեղի ունեցաւ Արշակ Տիգրանեան վարժարանի Գոհաբանութեան ճաշկերոյթ-պարահանդէսը: Ուրախ տրամադրութիւնը, կատակները, պարն ու զուարթ երաժշտութիւնը թեւածում էին Գարապեան սրահի ներսում: Ծնողաուսուցչական անձնակազմը, վարժարանի հոգաբարձուները, աշակերտներն ու ծնողները մէկտեղ հաւաքուելով՝ ստեղծել էին ընտանեկան ջերմ մթնոլորտ, որի մէջ իրեն ապահով եւ ազատ էր զգում իւրաքանչիւր տիգրանեանցի: Ճաշկերոյթ-պարահանդէսի անբաժանելի մասն էր կազմում գեղարուեստական ձեռնարկը, որի կազմակերպիչներն էին Տիկ. Ժմմա Ումրոյեանը, Պրն. Կոմիտաս Քէշիշեանը եւ Պրն. Ռուտիկ Առաքելեանը: Աշակերտական խորհրդի նախագահ Մորիս Սարաֆեանը բոլոր աշակերտների անունից իր խորին երախտագիտութիւնը յայտնեց ուսուցչական, հոգաբարձական կազմին, նաեւ ծնողաուսուցչական անձնակազմին (PTO) հաճելի երեկոյ կազմակերպելու համար: Նման ձեռնարկները, որոնք արդէն հաճելի աւանդոյթ են դարձել մեր վարժարանում, ընդունուած եւ սպասուած են բոլորիս կողմից՝ թէ՛ ծնողների, թէ՛ ուսուցիչների, թէ՛ աշակերտական կազմի կողմից: Նշենք նաեւ, որ այս տարի կազմակերպուած միջոցառումների շարքը վարժարանը նուիրելու է իր եռեսունամեայ տարեդարձին, որի բացումը արդէն կատարուեց շրջանաւարտների հաւաքով եւ գոհաբանութեան օրուան նուիրուած ճաշկերոյթ-պարահանդէսով:*

### Ջուրը Կեանք է

*Մեր նոր սերնդին ջրի պէս անհրաժեշտ է հայեցի դաստիարակութիւնը: Արշակ Տիգրանեան վարժարանը միշտ էլ իր աքտիւ ներդրումն է ունեցել Հայաստան Համահայկական Հիմնադրամին: Այս տարի դրամահաւաքին աքտիւօրէն մասնակցեցին վարժարանի ծնողաուսուցչական անձնակազմը՝ իրենց հաւաքած գումարով նպաստելով Արցախում ջրի մատակարարմանը: Ծնողների ջանքերով հաւաքուած 2,500 տոլարը նախապէս փոխանցուել է Հայաստան Համահայկական Հիմադրամին, որին աւելացաւ նաեւ աշակերտների եւ հոգաբարձական կազմի կողմից աւելացուած եւս 2,000 տոլարը: Այսպիսով, ինչպէս աշակերտները նշեցին հեռուստատեսային էկրանից «Արշակ Տիգրանեան ընտանիքը» Արցախում ապրող իրենց քոյրերին եւ եղբայրներին միշտ էլ պատրաստ է լինել բարոյական եւ հոգեբանական նեցուկ:*




*Ուսանողական Խորհուրդի ներկայացուցիչները՝ Հայաստան Հիմնադրամ թելեթոնին. աջին՝ Օրդ. Ալվարդ Ուզունեան, ձախին՝ Պրն. Արմէն Միսաեան*



## ԼԻԲԱՆԱՆ

# ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ԵՐԱԽՏԱՒՈՐ ՍԱՐԳԻՍ ՆԱՃԱՐԵԱՆԻՆ




*Տարբեր եղաւ սակայն իր յարաբերութիւնը Կ. Պոլսոյ Հայոց Շնորհք Պատրիարքին նկատմամբ, պաղ եւ նոյնիսկ վարկաբեկիչ իր Եղիշէ Պատրիարքի անձին եւ անունին համար, սկսեալ այն օրերէն երբ վերոյիշեալ ձեռագիրներու գողութիւնն ու վանքէն դուրս փոխադրութիւնը անարդարօրէն վերագրեց Շնորհք Պատրիարքի, իբր թէ այդ անօրէն արարքը կատարուած ըլլար Շնորհք Եպիսկոպոս Գալուստեանի լուսարարապետութեան շրջանին, եւ երեւակայել պէտք է, ութ տարիներ առաջ: Այս պարագան սուղ արժեց Եղիշէ Պատրիարքին, քանի որ ազգն ու եկեղեցին միայն զինք կրնային դատապարտել եւ ոչ միւս երկու պատուաւոր բարձրաստիճան հոգեւորականները՝ Շնորհք Պատրիարքն ու Սուրէն Արքեպս. Քէմհաճեանը:*

### Վազգէն Կաթողիկոսի Երկու Այցելութիւնները Երուսաղէմ

*Եղիշէ Պատրիարքի դրական գործերու ընթացքին երկու պատուաբեր առիթներով իր հրաւէրին վրայ Ամենայն Հայոց Տ.Տ. Վազգէն Ա Կաթողիկոսը Երուսաղէմ այցի գնաց: Առաջինը 1963-ին, Ս. Յարութեան Տաճարի ծախսալից վերանորոգութեան համար Հանգանակիչ Կեդրոնական Յանձնախումբ մը կազմելու որով պիտի իրագործուէր համազգային հանգանա-*

*Շար.ը էջ 19*



Թէքէեան Մշակութային Միութեան
Լոս Անճելըսի մասնաճիւղը
Կը հրաւիրէ Ձեզ
ՎԱԶԳԷՆ ՄԱԹԵԱՆԻ
Նկարչական ցուցահանդէսին
Թ.Մ.Մ. ՊԷՇԿԷՕԹԻՒՐԵԱՆ ԿԵԴՐՈՆ
1901 North Allen Ave., Altadena, CA 91001
Ցուցահանդէսի բացում
Հինգշաբթի, Դեկտեմբեր 16, 2010
Երեկոյեան ժամը 8:00ին
Ցուցահանդէսը բաց կը մնայ
Ուրբաթ Դեկտեմբեր 17, 2010
Երեկոյեան ժամը 6:00-10:00
ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ

# ԳՐԱԽՕՍԱԿԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ

# «ԱՄԷՆ ՄԱՐԴ ՄԷ ՓՈՐԱՑԱՒ ՈՒՆԻ»

## (ՔԱՋ ՆԱԶԱՐԻ 40-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ)

Ծ.Խ. »Քաջ Նազար« երգիծաթերթի 40-ամեակին առիթով, կը տպագրենք նոյն թերթին մէջ շարունակաբար լոյս տեսնող »Թեհրանեան Նամականի« երգիծական յօդուածաշարքին նուիրուած գրախօսականը, որուն հեղինակն է վաստակաւոր թատերական գործիչ, բանաստեղծ եւ »Մասիս«ի աշխատակից՝ Գարուշ Հարեանց: Նշենք որ »Թեհրանեան Նամականին« կը գրէ Ներսէս Տ. Մեսրոպեան-Բալայեան եւ կը ստորագրէ Մարլի Բաջի ծածկանունով:

***ԳԱՐՈՒՇ ՀԱՐԵԱՆՑ***

*Նամակագրական արձակը հայ գրականութեան մէջ ունի 100-ամեայ պատմութիւն՝ սկսած Նար Դոսի «Աննա Սարոյեան» վիպակից, շարունակած Ե. Չարենցի «Նամակներ ուղղիչ տնից» էսսէյով եւ վերջացրած Ներսէս Տէր Մեսրոպեանի «Թեհրանեան Նամականիով»: Նորավէպին բնորոշ, խօսուն նրբերանգներով է հարուստ այս ժանրը, որ նաեւ պահանջում է բաւարար անմիջականութիւն, հերոսի եւ հեղինակի միջեւ գոյատեւող փոխադարձ անկեղծութիւն: Դասականների մօտ գրական նամակներն աչքի են ընկնում իրենց դրամատիկական շեշտադրութեամբ, իսկ ահա մեզ ժամանակակից, համեստ վաստակի տէր մի բանաստեղծ բացել է իր ստեղծագործական եռանդի փակագծերը՝ երգիծական նամակների արձակով: Աւելին, նա ստեղծել է հաւաքական եւ յատուկ մի կերպար՝ Մատլի Բաջի անունով, որ մշտագրաղ մի կին է, իրեն չվերաբերող հոգսերի բեռով, նախասիրութիւններով, ծաւալուն հետաքրքրաշարժութեամբ: «Թեհրանեան Նամականի» բաւականին ստուար (շուրջ 190 էջ) եւ տրամադրութեան զարգացումը (ժպիտ... ծիծաղ... քմծիծաղ... քրքիջ... հռհռոց...) խիստ օրինաչափ է, անբռնազբօսիկ, համոզչական: Սիւժէն պարզ է, խճճուած չէ: Առանցքային կերպարը՝ Մատլէ Բաջին Թեհրանից Թղթակցում է Լոս Անճելոսում հրատարակուող «Քաջ Նազար» ամսագրին եւ պատմելով ներկայացնում հեռաւոր համայնքի ժողովրդական, ազգային, տնտեսական, քաղաքական, մշակութային բոլոր ուշագրաւ անցուդարձերը՝ ծնունդից մինչեւ մահ եւ հակառակը... կարծես բաց չի թողնում ոչ մի մանրամասնութիւն ու մարմնամարզութիւն, չի երկնչում, չի քաշւում իր կեսրայրը հանդիսացող քննադատութիւնից եւ բաց վէրք յիշեցնող՝ ինքնաքննադատութիւնից: Մեր հակիրճ գրախօսականի խորագիրը վերցրեցինք գրքի 12րդ էջի այն մասից, ուր ինչպէս եւ ամենուրէք, հիմնականում Մատլէն Բաջին հասարակական արատներ է նկարագրում եւ երգիծական ամսագրի հերոսից էլ խնդրում՝ «Նազար ջան, Աստուածդ սիրես, էս բաները մի տպիր, սրանք գաղտնիք են»: Դժուար չի եզրակացնել, որ Մատլէն Բաջիի նախատիպը հենց Նազարակին Ոխտիանն է՝ վտարանդիութեան եւ հայրենաբաղձութեան միջեւ դեգերող, տուայտող... 13րդ էջում կայ երգիծախառը եւ դառնանուշ մի գրառում՝ «Նոր տարուայ գիշերը հաճոյքս միայն Երեւանի ռատիոն եղաւ... հպարտացամ իմ հայութեամբ ու դուշս տուամ դուրս, որովհետեւ մենք որտեղ էլ որ ապրելու լինենք, անտէր չենք...»: Ահա ազգային-քաղաքական մի գերխնդիր՝ հեռակայ հասցէագրուած աւանդական բոլոր կուսակցութիւններին: Պիտի ասել, որ Ներսէս Տէր Մեսրոպեանին յաջողուել է պահպանել համարձակութիւնն ու նիւթերի հրատարապութիւնը, որովհետեւ «...ամէնը օրէնք են դարձել» (էջ 15): Բանաստեղծ լինելը չի խանգարել ասես հեղինակին: Անհարգի գեղումներ ու շեղումներ չկան: Արձակ շարադրանքը մարմանդ գետի նման դանդաղ է հոսում, բայց պահպանում է երգիծանքի չափաբաժինը: Ընթերցողը կարող է մէկ էջի սահմաններում ժպտալ, անմիջապէս ծիծաղել, քմծիծաղել, յետոյ կրնկկոխ քրքջալ ու հռհռալ...*

*Շատ ուշագրաւ է թաքնուած հայրենասիրութեան թրթռուն ջիղը, որ հեռախօսալարի հանգոյն դժժում է ու հաղորդում բարուց մինչեւ չարը, չորից մինչեւ թացը...*

*Միջանցիկ գործողութեան հանգամանքներն ու իրավիճակներն անհարգի ծեքծեքումներով ու ճւճւոցներով չեն ծանրաբեռնուած: Զուսպ է արուած ամէն ինչ, չափած-ձեւած են նամակ-պատումները, անխարդախ միջամտութեամբ են մօտեցուած ընթերցողների խստապահանջ քիմքին: Հանդարտ ոճը չի ձանձրացնում, պատմողականութիւնը նեարդեր հանգստացնելով տանում է իր ետեւից, թէեւ շրջապատում «... ոչ մեծի յարգանք ա մնացել, ոչ պատիւ...» (էջ 22): Էջ առ էջ ընթերցանութեան ձնագնդին մեծանում է, եւ կծկուող ձեան շերտի տակից հաւանութեան ձնծաղիկն է թաւշէ գլխիկը հանում, ծիկրակում չորսդին, քմծիծաղում ազգային վարք ու բարքի վրայ՝ ազդարարելով իր բերած գարունը... «Նանից խռովածը բանաստեղծ ա դարձեալ ու գիրք ա տպում... Չարենցին ու Թումանեանին ղաբուլ չունեն... Սեւակն ով ա... Շիրազն ո՞վ ա...» (էջ 52):*

*Իրանի ներքին քաղաքականութիւնը չի խանգարել փոքրամասնութիւններին՝ ապրել խաղաղ ու ստեղծել ազգային մշակոյթ: «Քրիստոնեաները մեր եղբայրներն են» ասել է կրօնական առաջնորդ Խոմէյնին, ամբոխն էլ ստիպուած ենթարկուել է այդ խաղաղարար կարգախօսին: Պատմութեան խորխորատներում են մնացել 19րդ դարի ռուսական կայսրութեան դեսպան՝ Իրանում, հայութեան մեծ բարեկամ, հռչակաւոր «Խելքից պատուհաս» պիեսի հեղինակ, (որն ի դէպ 1828 թուին, Երեւանում, ռուս սպաների ջանքերով բեմադրուել է) մեծ դիւանագէտ, Ալեքսանդր Բրիբոյեդովի խուժդուժ, արիւնռուշտ ժամանակները... Մատլէն Բաջիի մարդասիրական նամակները մոռացնել են տալիս հին պարսկական հարբած փղերի մասին, որոնք վճռորոշ դեր են խաղացել պատերազմական հանդուցալուծումներում.... Հազարամեակ ու կէս է անցել, երեւի պարսիկն էլ զարգացել, թուրքն էլ, բայց ներքուստ նրանք մնացել են մեր ոխերիմ բարեկամ-հարեւանները: Ով մեռաւ-գնաց, տեղը դատարկ մնաց: Ժողովրդական ափսոսանքի ալիքը մեծ է անգամ «Ալիք» օրաթերթում: «Խուզիստանն էլ վերան-վերտակ ա եղել: Անաստուածները քարուքանդ արան ամէն ինչ...»: Ահա ազգմիջեան մի դէպք, որ չի մարսել հազարամեակի վայրագութեան կծու հոտ արձակող մարխը, ինչպէս որ թուրքը չմարսեց խառնածին երիտթուրքերի ձեռամբ ի կատար ածուած Հայոց մեծ՝ 1915ի ցեղասպանութիւնը... Զուգահեռներ շատ կարելի է անցկացնել, բայց մե խնդրոյ առարկան վաստակաշատ բանաստեղծ Ներսէս Տէր Մեսրոպեանի երգիծական անտիպ գիրքն է՝ ՚Թեհրանեան Նամականին», ազգային ու միջազգային լուրերի, դէպքրեի, դէմքերի ամփոփամատեանը, որ ոչ միայն երգիծական գոյներ, երանգներ ունի, այլեւ ցաւ ու անհազստութիւն: Իմ կարծիքով, զուտ երգիծական գիրք համարելը սխալ կը լինի: Պիտի ընդունել նաեւ հասարակական կեանքի հոգսն ու յոյսը... Թէեւ պայծառ մռայլութեամբ են թաթախուած պատերազմելու հանգամանքները, նահատակների անուններով ստեղծուող շտապ օգնութեան մեքենաների շարասիւն ստեղծելու եւ բանակին նուիրաբերելու գաղափարը եւ այլն: Մատլէն Բաջին կատարում է քայլող հանրագիտարանի դեր, որի նշանակութիւնն անգնահատելի է Պարսկահայ գաղութի կեանքն ու կենցաղը ուսումնասիրողների համար: Ապագայի ազգագրական, մշակութային, ռազմավարական հետազօտութիւնների տեսակէտից էլ երգիծագիրքն այս քննութիւն բռնող է... Հեղինակը հեղինակել է իրանահայութեան խօսակցական լեզուով, որ խորթ չի հնչում եւ բերում է առանձնայատուկ մի միջավայր, որի համար ոչինչ չի խնայում գլխաւոր հերոսուհին: Անխտիր պատմում ամէն ինչ՝ Լոս Անճելոս քաղաքին եւս իրազեկ դարձնելով Իրանահայ գաղութի անցեալ ու ներկայ ապրելակերպին, սովորոյթներին, ժողովրդական մտածողութեանը: Թեհրանի Մեյդան Հասանաբադ թաղամասի հոգին ու ոգին է բերում հեղինակը: Մենք էլ մեր հերթին քաջածանօթ ենք դառնում Իրանահայ գաղթօճախի նիստուկացին, ինքնատիպ, ազդեցութիւններից գրեթէ զերծ մշակոյթին: Ժամանակագրական առումով «Եհրանեան Նամականի» երգիծամատեանն ընդգրկում է մօտաւորապէս 10 տարուայ անցուդարձ՝ անցեալ դարի ութսունականները... տեղ-տեղ համեմուած է թեմատիկ, տուեալ նիւթի ասելիքի հետ առնչուող ոտանաւորներով՝ ստեղծելով մի տեսակ «ազատ գօտի», որ ընթերցողը, մանաւանդ ոչ իրանահայ, չոհգնի, չձանձրանա, չանիծի... օրինակ՝*

... Մատլին ասում ա ղուրբան Նազարին,

Բարաքա հասնի նրա հազարին,

Թող Մատլու համար »ղրկի գրին քարդ«,

Կամ էլ մի սիրուն, փողաւոր մի

***Շար.ը էջ 19***

### ՃՇԴՈՒՄ

*«Մասիս»ի նախորդ թիւով (էջ 15) «Համաշխարհային երգարուեստի անզուգական գոհարը» յօդուածին մէջ սխալմամբ Լուսինէ Զաքարեանի նկարը դրուած էր, Գոհար Գասպարեանի փոխարէն:*

BURBANK-GLENDALE-PASADENA AIRPORT AUTHORITY
ENGINEERING GROUP

**NOTICE TO CONTRACTORS, SUBCONTRACTORS, VENDORS, MATERIAL SUPPLIERS**

**MAJOR CONSTRUCTION OPPORTUNITY AT BOB HOPE AIRPORT**

**Project:E10-35**

**Regional Intermodal Transportation Center (RITC)**

**Project Type & Description:**
**New Construction – Intermodal Transportation Center, Parking Structure, Elevated Walkway**

**Project Cost Estimate - $130 Million**
**(Federally funded; federal guidelines apply)**

**FOR MORE INFORMATION, COME TO A BUSINESS OPPORTUNITY OUTREACH & GENERAL CONTRACTOR PREQUALIFICATION MEETING**

**Meeting Date & Time:**
**DECEMBER 16, 2010 - 2:00 P.M.**
**Location:**
**Burbank Airport Marriott Hotel, 2500 Hollywood Way, Burbank, CA 91505**

**Visit our website for more details:**
**www.bobhopeairport.com**
Hyperlink: **Business Opportunities**
**(General Contractor Prequalification packet available 12/9/10 after 4:00 P.M.)**

# ԽՕՍՔ ԼԵՐԱՆ ԼԱՆՋԻ ՇԷՆԵՐԻՑ

## (Հատուած ››Տիգրան Արքայի Մուտքը Մուսաների Լերան Շէն( հրատարակուած գրից)

»Ու՞մ է հարկաւոր այն լեզուն, որն ազգի զաւակներին չի հասցնելու պատմութեան մնայուն արժէքները: Ո՞ւմ է հարկաւոր այն ոգին, որ սոսկ որպէս մի զանգակ է հնչելու ի լուր իր գոյութեան, եթէ ամէն մի նոր սերունդ չի ներդաշնակուելու նախնիներին«:

Խաչատուր Աբովեան

*ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ*

*Ես հայոց պատմութիւն չգրեցի: Այն հաւանական, ոչ հաւանական պատում է: Մի յանդիմանէք, եթէ չեղուեցի պատմութեան ճամբաներից: Իմ հոգում գեղած նախնիներիս մի կտոր սրտայոյզ պատում է այն: Անափառութիւն չէ այն, իմ լինելիութեան գիտակցութեան ոգու պոռթկումն է, եւ ինչո՞ւ ոչ նաեւ ճշմարտութիւն: Երեւակայութեանս Թռիչքի ճառագայթներին բազմած՝ գնացի հայոց Հայքեր, որ իմ ալեհեր հոգին հրճուէր հայոց արարումով, հայոց իմաստնութեամբ, հայոց արքաների ու քաջերի զէնքի փայլատակումներով: Եւ գուցէ, նաեւ, ձեր հոգիներում խնդան հայոց արքաները, արմէնների մեհեանները, հայոց տաճարների լոյսով հրավառուէք, Նաւասարդեան տօնահանդէսների թմբուկ զարկեր այնտեղ, գողթան երգիչների փողեր հնչեն, հայոց հին աստուածների բարեպաշտութեան գեղում լինի:*

*Գնացի աղօթելու հայոց աշխարհում իմ նախնիների պաշտամունքի միակ կանգուն տաճար: Կանգնեցի նրա մուտքին յառնած Հայկ Նահապետի զարմից՝ Գեղամի (մ.թ.ա. 2166 թուական) կառուցած փլած ամրոցի որմերի առաջ: Իմ նախնիների արարման ոգու խորհուրդը, լոյսը հոսեց իմ սրտին: Ակներս յառած դէպի արեւ, գնացի հայոց Միհր աստուծոյ տաճար, (Տրդատ Ա. 77 թ.) նրա սիւներն են իրենց վրայ պահում տիեզերքի կառոյցը, խորհուրդը նրա: Բարձրացայ նրա աստիճաններով, աջ բազուկս վերեւ պահած գնացի ատրուշան, երգեցի «Վահագնի Ծնունդը»: Ափերով խառնեցի մոխիրը, որ իմ նախնիների կրակով վառեմ հոգուս ճրագը, որ իմ նախնիների հաւատքով փոթորկի սիրտս: Նոյնիսկ մի ռուս մարդ, որ անցել է այդտեղից, գոչել է «Տաճարից միշտ էլ հեռանում ես մի քիչ հեթանոսացած՝ սրտիդ մէջ տանելով Արեգակի քարաքանդակ հիմնը», հապա անցնող Հա՞յը...:*

*Ես այդպէս տեսայ իմ նախնիների՝ Միտաննի, Արատտա-Հայասա-Նաիրի-Արմինա-Հայաստան «Օրինաց Երկիր» սրբազան Լեռնաշխարհը: Հայկական Լեռնաշխարհ, արիացի հայերի հեքիաթային, առասպելական հայրենիքն է այն: Ես այդպէս տեսայ Մուսաների Պաշտամունքի Լերան լանջերին իմ նախնիների հողի արարումը, ծառի պաշտամունքը, Արմինա-Հայաստանի փառքի Հայրենապաշտ Հայկազուն Տիգրան Արքան, նրա մուտքը Մուսաների Պաշտամունքի Լերան Շէն ու նրա հետ իրենց Նահապետի յաղթանակի Նաւասարդի տօնախմբութիւնը, Արտաշէս անուշ Թագաւորի հարսանեաց հանդէսը, հայոց այրուձիի Արածանիի յաղթական ճակատամարտը, հայոց աստուածների սրբավայրը, հայացած Անտիոքը, նրա արմէնների պղոտան հայոց զօրավարի հարսանիքը, հայոց ծովակալ Վարդանին: Եւ իմ «ճանապարհին» խօսեցի նաեւ Արմէն նախնիներիս հետ, պատմութեան ճանապարհներով նրա հետ քայլող ժողովուրդների հետ: Եւ գուցէ, որպէս ձիաւոր զինուոր, հայոց Հայկազուն Արքայի հետ Արածանիի ափերում կռուի էի գնացել:*

*Արիական դիւցազներգութեան կրակածին Սասուն աշխարհի Դաւիթի նման, հեռուից եկայ, որ գնամ հասնեմ Արմինայի կրակածին հայոց լեռներ, նրանց գագաթներից ժայթքած կրակով հոգուս արմենական ատրուշանը վառեմ, նրա արեւածին արքայի հետ այնտեղից հասնեմ Մուսաների Պաշտամունքի Լերան լանջի չէներ: Նորէն անցնեմ նրա ճամբաներով, բոկոտն քայլեմ նրա հողին, այնտեղ հոսած նախնիների արարման քրտինքը, նրանց ազատութեան մարտերի հոսած արեան կրակը փոթորկի իմ սրտին:*

*Ես, որպէս նրա ծնունդը, պարտք ունեմ տալու հայոց աշխարհին, պարտք ունեմ տալու Մուսաների Լերան իմ չէնին, իրենց լեռներին կռուի ելած իմ նախնիներին: Պարտք ունեմ հայկական լեգէոնի կապորալ հայր Արմենակին, նրա հետ Արարայի բարձունքները եւ Կիլիկիայի չէներին ազատագրելու գրոհի գնացող արմէն քաջազուններին բոլոր: Եթէ նրանց քաջութեան, մեծ գործերի, փառաւոր արարումների մի պտղունց ոգի կարողանամ հոսել ձեր սրտերին, հազար փառք իմ նախնիների տիեզերական բարեպաշտ աստուածներին:*

*«Բնիկ ո՞ր տեղացի ես», գրեց իմ տաղանդաւոր մտաւորական դասընկերս՝ Կարպիս Սարկաւագեան-Սուրէնեանը: Անծանօթ երկու հայ, որ հանդիպում են իրարու, Միհր արեւ աստուծոյ լոյսի բարեմաղթութիւնը փոխանցելու յետոյ, հարցնում են «ո՞րտեղացի ես, ծնողքդ բնիկ ո՞րտեղացի էր»: Ոմանք հպարտութեամբ պիտի պատասխանէին, որ ոչ թէ Հալէպցի, Պէյրութցի, Դամասկոսցի էին, այլ, որպէս յետնորդները իրենց գերդաստանների՝ հայոց լեռնաշխարհի չէներից էին: Իսկ կեանքի իմաստութեամբ լեցուն, սպիտակ թագերով տարեցները, մի պահ վերացած, լուռ հայեացքները դէպի հեռուներ յառած՝ պիտի շշնչային, Սասունցի, Վանեցի, Զէյթունցի, Մշեցի, Ալաշկերտցի, Արաբկիրցի, Մալաթիացի, Հաճընցի, Խարբերդցի, Մարաշցի, Տարօնցի, Շատախցի, Վասպուրականցի, Մուսա Լեռցի:*

*Ո՞վ կարող էր կարդալ նրանց սրտերի վիրաւոր մատեանները: Ո՞ւր էին թռչում նրանց երեւակայութեան ճաճանչները, իրենց չէների ճամբաներո՞վ, թէ՞ կարաւաններ դարձած քայլում անապատում: Խռովք պիտի իջած լինէր նրանց դէմքերին, որ տանուլ էին տուած եղել իրենց հողի կռիւը, փշուր դարձած քայլում ուրիշի հողին: Այդ ի՞նչպէս եղաւ, որ հազար, հազար տարիների իրենց աշխարհի լոյսը մարեց, իրենց հոգիներում հանգաւ իրենց նահապետի հողի պաշտամունքի ոգին: Ափսոս:*

*Հոգուս երեւակայութեան ջահերը Միհր աստուծոյ լոյսից վառած՝ լեռներ, ծովեր գրկած, թռչում եմ: Աստուածացած Հայկի համաստեղութիւնից քաղած աստղերի փունջը ձեռքիս, իջնում այնտեղ, որտեղ ցորեանի արտերն էին հրդեհուած լոյսից, դարաւանդների կողերին արեւի ծիածան գօտի կապած: Աստղեր նետում Մուսաների Պաշտամունքի Լերան լանջերին բազմած չէներին, որ հայկեան հողի ոգու լոյս տեղայ այնտեղ:*

*Կանգնում Մուսաների Պաշտամունքի Լերան լանջի ձորի բարձունքին: Մի պահ նստում ժայռին, ունկնդրում ձորի յատակից վազող ջրերի երգը, անուշ երանութիւն պարգեւող բնութեան համանուագը: Տիեզերական առեղծուածի բնութեան հեքիաթ է այն: Արմէն նախնիներս պաշտամունք նուիրեցին նրան, նրանից մարդացած աստուածներ արարեցին, արբեցան, խրախճացան նրանց պաշտամունքով, Նաւասարդ տօնախմբեցին:*

*Բանական մարդիկ ե՞րբ պիտի հաւատան բնութեան առեղծուածին: Նա է ճշմարտութիւնը, կեանքը, ինքն էլ է նրա անդադրում զարգացման արգասիքը եւ ոչ թէ երեւակայածին «Արարչութիւն»: Մարդ, սքանչացիր քու երկիր մոլորակով, սքանչացիր անհուն տիեզերքով, այնտեղից քեզ փնտռող երկիրների բանական էակների լինելիութեամբ, այնտեղ պայթող կրակալոյս աստղերով, բռնկող, ժայթքող աստղաբոյլերով: Սքանչացիր կեանքի հեքիաթով, քու բանականութեամբ ստեղծած արարչութիւններով, կենդական աշխարհի վերին գահին բազմած լինելու հպարտութեամբ:*

*Իջնում եմ նախնիներիս պատած դարաւանդներով, ժպտում են ինձ ծաղկած ծառերը, բնութեան հրավառութիւն, արգասաւորութիւն, Անահիտի հարսանեկան հանդէս է այնտեղ: Մուսաների պաշտամունքի լերան լանջի չէնի տներն են իջնում դարաւանդները գրկելու: Լոյս է չէնը, նրա փողոցներով մանչեր են վազում, դպրոցի զանգերն են հնչում, կոչնակներն են զարկում, գլխահակ մամիկներ ժամ են գնում: «Է՜ հէյ, ով կայ այնտեղ» կանչում եմ: Ձորն է արձագանգում, դողում են կողերը նրա, վերի դարաւանդներում հողը արեւին բացող մշակներն են քրտնաթոր դէմքերով, չէնի դռներն են բացւում: «Մենք ենք», լեռնականի բամբ ձայնով պատասխանում են: Բարձրանում եմ չէն, կանաչ ժպտում է այն, սպիտակ ծուխի սիւներն են գալարուելով բարձրանում, տներն են վառւում կարմիր տանիքներով, արեւի ճառագայթներից քաղած կարմիր լոյս են փռում չորս բոլորը:*

*Շէնի մարդկանց նոր պատած տներն են հասել միւս ձորի կողերի դարաւանդներին, բարձրացել՝ գրկելու լերան կողերից իջնող անտառի դափնիները: Նրա կողերից ժայթքած հազար աղբիւրների ջրերը վազում՝ չէնի առուներով դէպի այգիներ: Աղբիւրների առաջ եղէգնեայ խսիրներով ծածկած բացատում շատ մարդիկ նստած են: Թմբուկ են զարկում, փողերը իրենց երգերն են հնչեցնում, շուրջպարի ելած մարդիկ դոփում են հողն իրենց, դղրդում է լանջը, սեւ հունով գետի ալեկոծ ջրերն են փրփրում: Քայլում եմ ճամբաներով, ունկնդրում վազող ջրերի խոխոջանքը: Շէնի բարձունքին սպիտակ տներ են, քաղաքների տապից փախած մարդկանց հիւրընկալ տներն են, որոնք, իրենց նախնիրների Վանատուր աստուծոյ հիւղակների նման, ապաստան*

*Շար.ը էջ 17*



## ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ՆԱԽԱԿԱՐԱՊԵՏԸ
# ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՇՄԱՒՈՆԵԱՆ
## ՀԱՅ ՄԱԴՐԱՍԻ 300-ԱՄԵԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ

*ՀԱՅՐ ԽՈՐԷՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ*

Հայ ժողովրդի տարաշխարհիկ զաւակներն աշխարհի որ անկիւնում էլ հանգրուանել, ստեղծել ու արարել են, տքնել ու մաքառել են, հիմնել են եկեղեցիներ, զարկ են տուել դպրութեանը, բացել դպրոցներ, հրատարակել պարբերականներ:

Այս գիտակցութեամբ ապրող հարուստ ակնավաճառ Նորջուղայեցի Շահամիր Շահամիրեանը 18րդ դարավերջին առաջինը բացեց տպարան Հնդկաստանի Մադրաս քաղաքում: Նոյն մտահոգութեամբ հայ առաքելական եկեղեցու բարեջան սպասաւոր եւ ազգի հոգսերով ապրող Տ. Յարութիւն աւագ Քհնյ. Շմաւոնեանը բացում է Մադրասում երկրորդ տպարանը...

Տ. Յարութիւնը ծնուել է 1750 թ. Պարսկաստանի (Իրան) վարդաշատ Շիրազ քաղաքում: Կրթութիւն է ստանում ծննդավայրում: Եղել է հմուտ արհեստաւոր, հիւսն ու երկաթագործ, իմացել բրուտագործութեան եւ ձիթահանութեան արհեստը, կարողացել բամբակից թուղթ ստանալ: 1770-ական թուականների սկզբին Ս. Ամենափրկիչ վանքում ձեռնադրւում է քահանայ: Նա մէկ շաբաթում կորցնում է մանկահասակ երկու որդիներին (ունէր մէկ աղջիկ եւ երկու տղայ): Անդարմանելի ու անամոք վիշտը սրտում որդեկորոյս հայրը թողնում է աշխարհիկ կեանքը եւ իրեն նուիրում ճգնակեցութեանը: Շիրազի, դեռեւս տասնվեցերորդ դարում գոյութիւն ունեցող հայկական համայնքն այնտեղ ունեցել է հայկական եկեղեցի եւ Շիրազից մօտ 2 ժամ հեռաւորութեան վրայ գտնուող Բաբաքուհ լերան ստորոտում գերեզմանատուն: Գերեզմանատան հարեւանութեամբ գտնուող դերւիշների (մահմեդական թափառական կրօնաւոր) մենաստանում երիտասարդ քահանան ապրում է եօթ տարի: Այս տարիներին ուսման տեսակէտից նա շատ բան է ձեռք բերում, զգբաղւում է ինքնակրթութեամբ, խորացնում իր գիտելիքները աստուածաբանութեան մէջ: Ինչ խօսք, բազմատեսակ գիտելիքների տէր քահանան քաջ գիտէր իր ժողովրդի պատմութիւնը, հայ հին եւ միջնադարեան գրականութիւնը:

Անսալով վշտահար երէցկնոջ բուռն թախանձանքներին, եւ Նոր Ջուղայի հոգեւոր առաջնորդ Տ. Մկրտիչ Արք. խնդրանքին, ում դիմել էին Շիրազի հայերը, եօթնամեայ ճգնակեցութիւնից յետոյ հրաժեշտ է տալիս դերւիշներին եւ վերադառնում քաղաք: Նոր Ջուղայի առաջնորդի տնօրինութեամբ 1784ին նշանակւում Մադրասի հոգեւոր հովիւ եւ տիրուհի Վարդենիի ու դստեր հետ մեկնում է Հնդկաստան:

Շմաւոնեանը Մադրասի Ս. Մարիամ Աստուածածին եկեղեցու հոգեւոր հովիւը եղաւ երկար ու ձիգ քառասուն տարի՝ 1784-1824 թթ.: Նա աշխատասիրութեան մարմնացում էր, նրա ամէն մի աւարտուն գործ տքնաջան աշխատանքի արդիւնք էր: Ինչպէս վկայում են ժամանակակիցները, նա անհանդուրժող էր ծոյլերի նկատմամբ, ովքեր շրջում էին ողորմութիւն հաւաքելու, յորդորում էր նրան աշխատել:

Ազգային ոգու վերազարթօնքի մթնոլորտում հոգեւորականն ու ազգանուէր մտածողը 1789 թ. Ս. Աստուածածին եկեղեցու հարեւանութեամբ հիմնում է տպարան: Թէ որքան անձնուիրաբար է վերաբերուել իր տպագրական գործին Շմաւոնեանը, երեւում է նրանից, որ ինքը եղել է իր տպարանի գրաշարն ու անձամբ է ձուլել տառերը եւ չի օգտուել Շահամիրեանի տառերից: Զարչարանքով երկնած նոր տառերը Տէր Յարութիւնը անուանում է «Որդի վշտաց»՝ «Ով ոք վայելէք գքաղցրաճաշակ գրքուկս այս, յիշեցէք որդի վշտաց եւ դոյդ գրացս, որ յօրինեցաւ ձեռամբ իմով՝ յամենայն պարագայս թէ տառաշինութիւնն, եւ թէ շարումն կապարից»:

Եւ այսպէս, 1789ին կեանքի կոչուեց տպարանն ու նոյն թուականին տպագրուեց առաջին գիրքը՝ «Պատմութիւն Մարիանէ Կուսին» եւ յաջորդաբար Ա. Ջուղայեցի «Աղօթամատոյց» 1790..., Յովսէփ Արք. Արղութեանց «Օրինակ հանդիսաւոր ծանուցման եւ ողբոց» 1791, 1792... Սիմէոն Երենաից «Տաղարան փոքրիկ» 1791, Ն. Շնորհալի «Յիսուս Որդի» 1792..., եւ շատ այլ արժէքաւոր աշխատութիւններ: Տպարանում տպագրուել է 2 տասնեակի հասնող գրքեր:

Մարդկային լաւագոյն յատկութիւններով տոգորուած Յարութիւն Աւ. Քհնյ. Շմաւոնեանի աշխատասիրութիւնն է ամէնից աւելի զարմացնում, անդադրում աշխատել է, ստեղծել: 1794 թուականի Օգոստոսի 7ին հրատարակում է մի թերթ «Բարեպաշտ պարոնաց եւ մաքրակենցաղ տիկնանց Մադրասիս հայոց», որով իր հայրենակիցներին յայտնում է «Ազդ արարող» Ազդարարի հրատարակութեան մասին, ուր ընթերցողին հետաքրքրող բազմաթիւ նիւթեր են լինելու: 1794 թուականի Հոկտեմբերի 16ին հիմք է դրւում հայ պարբերական մամուլի առաջնեկին:

Աշխատասէր հոգեւորականը իր սեփական միջոցներով եւ ծանր աշխատանքով սկսում է տպագրութեան գործը: Նա բաւարարեց Մադրասի, հնդկահայ վաճառականութեան, առհասարակ հնդհակայ հասարակութեան միջավայրում առաջացած պահանջքը, ունենալ հայալեզու պարբերական: Շմաւոնեանն իր շուրջն է համախմբում հայրենասիրութեամբ լեցուն երիտասարդների եւ հիմք դնում հայ պարբերկան մամուլին՝ «Ազդարարին»: Այն կազմուած էր անգլիական ամսագրերի օրինակով, լոյս տեսաւ 1794 թ. Մարտ ամիսը՝ ընդամէնը 18 օրինակով: Շմաւոնեանը հաւատարիմ մնաց գրաբարին եւ Նոր Ջուղայի բարբառին, «Ազդարարը» հասել է Կ. Պոլիս, Սուրբ Էջմիածին ու Նոր Նախիջեւան: Այնուհետեւ թերթի հրատարակութիւնը դադարեց, սակայն տպարանը շարունակեց գործել եւս 13 տարի՝ մինչեւ 1809 թ.: «Ազդարարը» ազդակ եղաւ Կալկաթայում հրատարակուող «Հայելի Կալկաթեան», «Ազգասէր», «Ազգասէր Արարատեան», «Եղբայրասէր» եւ այլ պարբերականներին:



Շմաւոնեանն իր «Հոգեւորդու» երկունքով ազդարերց հայ մամուլի գալիքը ու ճանապարհ հարթեց «Ազդարարից» մինչեւ մեր օրերի նոր ազդարարներ:

Տէր Յարութիւնն իր երկրային կեանքն աւարտեց 1824 թ. փետրուարի 9ին, թշուառութեան մէջ: Նա թաղուած է Մադրասի Ս. Աստուածածին եկեղեցու բակում: Շիրմաքարին փորագրուած է նրան բնութագրող հետեւեալ խօսքերը:

«Որ սուրբ կրօնի լեալ արթուն արուք,
Ուշիմ եւ զգօն յամենուստ յարգեալ,
Ճարտար, խոհամիտ եւ նուրբ հանճարիւք,
Հանգեալ զծեր կեանս կայ աստ հողացեալ:
Աստ հանգչի Տէր Յարութիւն Շմաւոնեան, բարեկրօն աւագ երէց Մադրասիս հայոց: Ծնեալ ի Շիրազ, վախճանեցաւ յամի տեառն 1824, Ֆէվրէր 9, ի հասակի 74 ամաց: Քահանայագործեալ աստ արթնութեամբ զամս քառասուն»:




Մինչեւ 1894 թ. Յարութիւն Շմաւոնեանի դիմանկարը գոյութիւն չունէր: Երբ այդ նոյն թուականին նշւում էր հայ մամուլի 100-ամեակը, Մխիթարեան Միաբանութեան հայրերը որոշեցին սերունդներին պարգեւել Շմաւոնեանին՝ ալեհեր, թաւ մօրուքով, տխրաթախիծ աչքերով, բարեպաշտ ազգասէրի դիմանկարով:

2008 թ. Նոյեմբերի 8ին ազգիս Վեհափառ եւ սրբազնագոյն կաթողիկոս Գարեգին Բ.ի հանդիսապետութեամբ կատարւում է հոգեհանգստի Յարութիւն աւագ Քհնյ. Շմաւոնեանի շիրմին:

2012 թ. լրանում է Մադրասի Ս. Աստուածածին եկեղեցու՝ Հայ Մադրասի հիմնադրման 300-ամեակը, որն ամբողջական չէր լինի առանց Յարութիւն Աւ. Քհնյ. Շմաւոնեանի եւ նրա անձեռակերտ կոթող «Ազդարար»ի:


**ՔԱՋ ՆԱԶԱՐ**
**ՈՒԴԻԴ ԵԹԵՐ ՇՕ**

**Ամէն Կիրակի երեկոյեան**
**ժամը 10:00-ից 12:30**
**Կլէնտէյլի 380-րդ կայանից**



**ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ**

**PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

*Մանրամասների համար հեռաձայնել՝*
**(818) 246-0125**

Վարձման գներն են՝

| | |
|---|---|
| Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ | $ 400 |
| Long Weekend-ների համար՝ | $ 500 |
| Մէկ շաբաթուայ համար՝ | $ 675 |
| Մէկ ամսուայ համար՝ | $ 1450 |

## ԻՆՉ Է ԱՐԵԱՆ ԳԵՐՃՆՇՈՒՄԸ

Արեան գերճնշումը կը շատնայ մարդոց մէջ, եթէ արիւնը սրտէն դէպի մարմնի զանազան մասերը մղելու միջոցին, այդ մղիչ ուժը աւելի զօրաւոր կ՚ըլլայ քան բնական մղումը:

Արդէն բոլորին ծանօթ է, երբ արեան գերճնշումը կը չափուի, ցոյց կը տրուի երկու թիւերը, անոնցմէ մէկը կը կոչուի սիսթոլիք՝ որ վերի թիւն է եւ որ սրտի կծկումի չափն է, իսկ երկրորդ չափը կը ներկայացնէ տայասթոլիք վարի թիւը, ցոյց կու տայ ճնշումը տրոփներու միջեւ եւ այս պէտք է հաւասարի գիտական մեթոտին, որ բնական կը համարէ ցոյց տուած երկու թիւերը, այսինքն տայասթոլիք եւ սիսթոլիք:

Արեան ճնշումի քննութիւնը բնական եւ առաջին քայլն է քննութեան: Այս տարրական եւ հեշտ քննութիւնը իր պարզութեան մէջ կարեւոր է, քանի որ բժիշկը անոր վրայ հիմնուելով է, որ կը շարունակէ ենթակային մօտ ախտաճանաչում գտնելու:

Այս պարզ քննութիւնը շատ կարեւոր է, քանի որ ընհանրապէս կը շեշտուի, որ արեան ճնշումի քննութիւնը ցոյց կու տայ կարգ մը երեւոյթներ, քանի որ ընդհանրապէս արեան գերճնշումին կու տան լուռ սպաննողի դեր, քանի որ յայտնի չի ըներ, որ մարդը արեան ճնշում ունի, պաշտպանուելու համար:

Նմանապէս ան կրնայ՝ սթրոք պատճառել, երիկամներու խանգարում տալ:

Այս պարագային, բժիշկները ենթականերու ուշադրութեան կը յանձնեն այն իրողութիւնը, որ շատեր առնելով հանդերձ ճնշումի դեղահատեր կ՚ունենեն բարձր ճնշումներ, կամ առնուած դեղին տկարութեան պատճառով եւ կամ ալ կը յառաջացնէ քովնտի վնասակար պատճառներ:

Բժիշկները վստահութիւն ունենալով հանդերձ գերճնշումի չափիչ մեքենաներու նկատմամբ, միշտ կը թելադրեն, որ տուներու մէջ գտնուող չափիչները կրնայ խանգարուած ըլլալ, ուստի հարկ է զայն յաճախ քննութեան ենթարկել, գործածելէ առաջ:

Նաեւ նշմարուած է, որ արագութեան եւ անձկութեան մէջ, արեան ճնշումները կրնան բարձր չափուիլ, ուստի յանձնարարելի է, որ չափուելէ առաջ, ենթական իր հանդարտութիւնը գտնէ:

## ԽՕՍՔ ԼԵՐԱՆ ԼԱՆՋԻ ՇԷՆԵՐԻՑ

Շարունակուած էջ 15-էն

են տալիս այնտեղից անցնողներին, իրենց չէն ժամանողներին:

Քայլում եմ լերան լանջի արտերի ճամբով: Մինչեւ ծովի ջրեր գնացող ճանապարհն է լերան լանջին գօտի կապել, նրա վրայ որպէս ջահեր հայոց չէներ են վառւում: Արտերի ճամբին շարան, շարան տներ են կանգնած, նրանց կողքին հազար աչուկներով լուսոտ արծաթափայլ ձիթենիներ, հազար լուսոտ, կարմիր ժպիտներով քօղուած թզենիներ:

Աւանդում են Մուսաների պաշտամունքի լերան լանջին պատած առաջին չէնի տների յուշն է, այն, որ նրա բացատում հայերը իրենց արքայի հետ Նաւասարդ են տօնախմբել: Այս ճամբով են անցել իրենց Արքան, զօրավարները ու ծովակալը իր: Կանգնել եմ ճամբեզրի բլրակին: Երեսներին խաչեր տաշած՝ փլած վէմեր:

Լերան լանջին, իրենց Նոր Վարդապետի առաքեալի տաճարն է: Այս այն բլրակը չէ՞ր արդեօք, որ իրենց Արքան պատուիրել էր Մուսաների պաշտամունքին նուիրուած մեհեան պատէին: Զհանդուրժեցին: Մարեցին նրանց հին աստուածների լոյսը, փլեցին նրանց տաճարները, նրանց լացող վէմերով Նոր հաւատքի տուներ պատեցին: Կրօնափոխ արեցին: Փոխան արիւնոտ խաղողի ու պայթած նռների կրակի, նրանց երեսներին խաչեր փորեցին: Խաչ, խորհրդանիշը լոյսի, խորհրդանիշը արիացի արմէնների: Արմէն-հայերի նախնիները այն քանդակել էին իրենց քարէ կացարանների պատերին: Նրանց կեռ գագաթներից իրենց աստուած Միհրը լոյս էր սփռում:

Վարսերս քամու քնքշալի խաղին յանձնած՝ շարունակում եմ քայլել այդ ճանապարհով: Կանգնում մի պահ, ընդերքի որոտի ձայնն է գնում դափնիների պուրակ, լուսնեակի սպիտակ ժպիտով լեցուն դափնիներ: Գետինն է դողում, ընդերքն է որոտում, երկրի դողից իր ճամբան կորցրած ջուրն է իր համար նոր ուղի բացում: Մուսաների Պաշտամունքի Լերան մեծ չէնի ճանապարհին եմ:

Նրա հարաւ-հիւսիս ճամբաների խաչեալ կէտին, Նոր հաւատքի տաճար է բարձրանում նրա աստիճաններով, արեւին նայող պատին ժպտացող քանդակներ, դրան ճակատին՝ հայերէն խօսք: Խորանների դիմացի որմերից հոսող լացող կամարներ: Պատին քարէ աւազանիկ, նրա միւռոնոտ ջրով նորէն երեսս եմ ցօղում, ժպտո՞ւմ, թէ՞ լացում է հոգիս: Մօրս գրկին այն մանչն եմ:

Ճանապարհին չէնի շուկան է, այնտեղ շարան-շարան խանութներ, արհեստանոցներ: Շուկայի ճանապարհի առաւել մարդաշատ տեղամասերի պատերին՝ քարէ նստարաններ: Ռանչպար մարդիկ են նստած, պատմում աշխարհից, իրենց լերան կուիւներից, իրենց նախնիների մարտական սխրանքներից: Վանդակաւոր տախտակներին յենած՝ իրենց ճատրակի խաղերն են, թագաւոր դարձած քաջ զինուորների պատուին բարձր կանչեր: Պարմանուհիներ, հարսեր ջուրի կուժեր ուսերնին, նազանքով անցնում, ինչքան սրտեր են խոցւում նրանց ակներից, արեւ իջած դէմքերից փայլատակող լոյսի կրակից:

Քայլում՝ գիւղամիջի ձորի ապառաժ կողին բացուած քարէ ճանապարհով, կանգնում նրա բարձունքին: Արեւին կապոյտը իջած ջրերն են ներքեւ, ծովախորշ: Այնքան մօտիկ, որ ցատկես, կարծես նրա ջրերին կ՚ընկողմանես: Բոպիկ քայլում հողին, նախնիներիս արարման հեւքն է հոսում սրտիս: Ճանապարհի ձորակի քարէ կողին առուակ է, ժայռից քամուած ջուրն է հոսում, լցնում եմ ափիս, ըմպում, սարսռում է սիրտս, նախապապիս փորած աղբիւրն է այն:

Լերան լանջից գնացող ճանապարհն է մտնում չէն: Հայոց Արքայի խօսքով, լերան հեռու ճանապարհից հայոց չէներ են հասել ծով: Նրա բարձունքից մինչեւ ծովի ջրերի ափեր, սպիտակ կողերով տներ են բարձրանում: Քայլում եմ չէնի ճամբաներով, լոյսի ժպիտ մաղթում մարդկանց: Անցնում ձորի կողին փորուած քարէ մուլթ ուղիով, չէնի ընդարձակ արտերը, պարտէզներն են առաջը փռուած: Հազար, հազար տարիներ առաջ քաղաք էր այդտեղ, Հելլատայի Սելեւկիոս Նիկատոր զօրավարի Սելեւկիա քաղաքը: Պատմութիւնը վկայ, ով իր զաւակների յեղած արեամբ չի պաշտպանում իր տունը, ընկնում է այն:

Փլուեց Սելեւկիան, հելլէնները փախան, ուրացան իրենց ցեղը, ուրացան իրենց աստուածներին, ուրացան իրենց խօսքը: Իրենց արքայի հետ կռուի եկած Հայ-*արմէններ հասան նրանց՝ Մուսաների Պաշտամունքին նուիրուած լեռներ, չէներ պատեցին նրա կողերին, նրա լանջին բացած ճանապարհին ջահեր վառեցին, հասան Սելեւկիա: Նրա աւերակների վրայ տներ պատեցին, հողին ցորեանի արտեր, պարտէզներ արարեցին: Հայոց հին աստուածները, իրենց աստուածացած Նահապետը ինչքան տիեզերական ոգու հուր են լցրել նրանց սրտերին, որ հազար, հազար տարիներ քայլում են իրենց իմաստուն արարչութեամբ: Անմար է իրենց աստուածների ոգին, որ հազար, հազար տարիներ քայլում են իրենց իմաստուն արարչութեամբ: Անմար է իրենց աստուածների ոգին, Արմէն-հայերի սրտերում այն վառւում է որպէս խարոյկ:

Գնացի Սելեւկիոսի նաւերի կառանման ծովախորշ: Բարձրացայ ծովի ալիքներից ճարճատած, մամռակալած պատնէշի քարերին: Դիտեցի հայոց ծովակալ Վարդանի առաջնորդած, հայոց աշխարհի Հայկազուն Արքայի նաւերի ծփանքը: Բարձրացայ նաւ, գրկեցի Արքային, ծովակալին, նաւազներին: Արքայի հայկազունեան թագից հոսած Միհրի լոյսից վառեցի հոգուս ջահերը:

Իրենց արքայի հետ եկած հայոց աշխարհի հայերը չգնացին իրենց պատած չէներից: Ազգեր դաւեցին նրանց, տարան փլած Փիւնիկէի դաշտեր, արծուի խոյանքի տեսքով նոր չէն պատեցին՝ «Ցուշ Մուսա»: Կանաչ ծփանքով ծովակ արարեցին, իրենց ցեղի իմաստնութեան լոյսը փռեցին այդտեղ էլ հասած «Վեհագոյնը հիւսիսային ժողովուրդների» շառաւիղները:

## ԶՕՐԱՑՈՒՑԷՔ ՁԵՐ ՈՍԿՈՐՆԵՐԸ

Հետազօտութիւնները ցոյց տուած են, որ Ամերիկայի մէջ կան 10 միլիոն մարդիկ, որոնց 80% կանայք ունին Osteroporosis:

Տակաւին կան 34 միլիոն, որոնք կը գտնուին այս հիւանդութիւնը ունենալու վտանգին առջեւ:

Այս բոլորին մէջ տիրապետողը արեան բնական խտացումի պակասն է: Բայց այս տեղեկութիւններու կողքին պէտք է աւելցնել, որ եթէ փոփոխութեան ենթարկէք ձեր սննդառութիւնն ու կերակրականոնը անպայման որ ի վիճակի պիտի ըլլաք խուսափելու այս վտանգէն:

Թելադրութիւնները շատ պարզ են, միայն ձեզի կը մնայ հետեւիլ անոնց՝

1. Նախ որ առողջ սննդառութիւնը կը յառաջացնէ առողջ եւ ուժեղ ոսկորներ, կենսանիւթեր, ստանալիք սնունդի որակը թէ մարմնական բոլոր կարիքներուն գոհացում կու տայ եւ թէ անոնց մէջ յատկապէս կը նպաստէ ոսկորներուն:

Վերջերս տեղի ունեցած գիտահետազօտութիւնները ցոյց տուած են, որ կանայք պահանջուած քալսիումի մէկ երրորդը կամ կէսը միայն կ՚ընդունին: Այս նպատակով յառաջացած հաստատութիւնը կը թելադրէ, որ 20-50 տարեկան կանայք պէտք է օրական 1000 մլկ քալսիում եւ 400 մլկ կենսանիւթ D առնեն:

Քալսիումով հարուստ են կաթը, մածունը, պանիրը եւ անոր տեսակները, բանջարեղէններին՝ թարմ պրաքլին, սոյպինը:

## ԳՈՀԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՕՐԸ

Շարունակուած էջ 7-էն

դամ ճաշերը եւ ընտանեկան մտերմիկ, հարազատ եւ անկեղծ մթնոլորտի մէջ իւրաքանչիւրը սոյն տարուան ընթացքին իր վայելած բարիքի ու պարգեւներուն համար յատուկ շնորհակալական խօսքը արտասանեց, գոհունակութիւն տալով, որ տարի մը եւս առիթ ունեցանք շարունակելու հայ երեխաներու միտքն ու հոգին լուսաւորելու սուրբ աշխատանքը:

Նոյեմբեր 25, Գոհաբանութեան օրուան առաւօտուն, Հայ Քոյրերու վարժարանէն խումբ մը աշակերտներ, ընկերակցութեամբ ուսուցչուհի Տիկ. Լինտա Գանտիլեանին՝ ելոյթ ունեցան հեռատեսիլէն, մասնակցելով Հայաստան Համահայկական Հիմնադրամին կազմակերպած հեռուստամարաթոնին, ներկայացնելով՝ յատուկ այդ նպատակով վարժարանէս ներս կազմակերպուած հանգանակութենէն հաւաքուած $2800 գումարը:

Այսպիսով, բեղուն ամիս մը եւս գրանցուեցաւ Հայ Քոյրերու վարժարանի Քսանհինգամեայ պատմութեան մէջ, որով վարժարանի մեծ ընտանիքը գոհունակութեամբ եւ ապագայի նոր նուաճումներու տեսլականով, անսպառ եռանդով լծուեցաւ Դեկտեմբեր ամսուան ծրագիրներու իրականացման աշխատանքին:

**Հրապարակի վրայ է**

**«Ցուշերու Բագին»**

**հեղինակ՝ Արմէն Ղարիպ**

**(տպ. Պէյրութ 2009)**

**Գինը՝ $20**

**Ստանալու համար դիմել «Մասիս» Շաբաթաթերթին**

**1060 N Allen Ave Pasadena, CA 91104**

**626-797-7680**

# ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՍԱՐԳԻՍ ՆԱՃԱՐԵԱՆԻՆ

*Շարունակուած էջ 1-էն*

*բար նաեւ յոգնած Սարգիս Նաճարեանը այսօր այսքան աշխոյժ, չարժուն եւ նախաձեռնող է, ուրեմն ինչ պիտի ըլլար լրագրութեան ասպարէզ նոր մուտք գործած երիտասարդ, կայտառ Սարգիս Նաճարեանը ասկէ աւելի քան 50 տարիներ առաջ: Տրամաբանական պատասխանը տրուած սեպելով, այս դժուարութիւնն ալ այս ձեւով յաղթահարուած կրնանք սեպել:*

*Իսկ աւելի քան 53 տարի ի՞նչ ըրած է Սարգիս Նաճարեան հայ մամուլէն ներս: Այս հարցադրումը ինքնին սխալ է: Պէտք է հարցնել, հայ մամուլէն ներս ինչ չէ՞ ըրած Սարգիս: Ան եղած է տպարանի պատասխանատու, էջադրող, թարգմանիչ, թղթակից, սրբագրիչ, յօդուածագիր, լրատուական բաժնի խմբագիր, խմբագրութեան անդամ, պատասխանատու տնօրէն եւ պատասխանատու խմբագիր (չեմ գիտեր բան մը մոռացա՞յ...): Աւելցնեմ նաեւ որ Սարգիս եղաւ նաեւ հայ մամուլին բանտարկեալը, չզարմանաք սիրելիներ, այո, Սարգիս Նաճարեան եղաւ հայ մամուլին բանտարկեալը: 1989-ին, երբ «Արարատ» օրաթերթը իր խմբագրատուն-տպարանին ռմբահարման պատճառով լոյս կը տեսնէր Սին էլ Ֆիլի Սահակեան դպրոցին ներքնայարկը, ճակատային գիծերու շատ արագ փոփոխութեան պատճառով, Սահակեան դպրոցը ինկաւ կռուող երկու կողմերու արանքը եւ տպարանը, ուր կը գտնէր Սարգիս իր առօրեայ խմբագրական աշխատանքները կատարելու համար մնաց կռիւի ամենէն տաք կէտին վրայ: 15 օր Սարգիս մնաց բանտարկուած հոն: Կռիւը այնքան բուռն էր, որ ոչ մէկ ձեւով հնա-րաւոր եղաւ կապ պահել Սարգիսին հետ: 15 օր ետք միայն, ի ուրախութիւն բոլորիս, Սարգիս ազատագրուեցաւ իր խմբագրատուն-բանտէն, սակայն մէկ տարբերութեամբ. Սարգիս մօրուքաւոր դարձած էր: Այնպէս որ սիրելիներ, եթէ օր մը ձեզմէ մէկը Սարգիս Նաճարեանին մօրուքաւոր նկարը տեսնէ, չխորհի թէ Սարգիս իր մտաւորական ըլլալը շեշտելու համար է որ մօրուք ձգած է. այդ պարզապէս Սարգիս Նաճարեանի տպարան-բանտէն յուշի ծուէն մըն է միայն:*

*«Արարատ» օրաթերթ, «Ազգ» օրաթերթ, «Արարատ Մարզական» պարբերական, «Մասիս» շաբաթաթերթ եւ ամսաթերթ, «Նոր Կեանք» շաբաթաթերթ, «Կանչ Հրեշտակապետին» պարբերաթերթ եղան հայ մամուլի այն օրկանները, որոնց հրատարակման, խմբագրման թէ բովանդակալից դարձնելու համար Սարգիս Նաճարեան բերաւ իր անուրանալի ծառայութիւնը:*

*Խմբագրականներ, յօդուածներ, լրատուութիւններ, թղթակցութիւններ եւ հարցազրոյցներ յաջորդեցին գիրար: Սարգիսին գրութիւնները յատկանշուեցան իրենց պարզութեամբ, մատչելիութեամբ եւ այժմէականութեամբ: Սարգիս Նաճարեանի կատարած հարցազրոյցներէն հասկաքաղ մըն է որ այսօր կը հրամցուի մեզի «Դէմ Առ Դէմ» խորագրին տակ: Եթէ անոր բոլոր գրութիւնները ամփոփուին, այս հատորի նման քանի՞ գիրք լոյս աշխարհ կու գայ չեմ գիտեր: Իրեն ալ պիտի չհարցնեմ, որովհետեւ գիտեմ տալիք պատասխանը... օհճճճ...:*

*Կ'իմանամ, թէ Սարգիս Նաճարեան արդէն իսկ պատրաստելու վրայ է իր լրագրական կեանքի յուշերը ամփոփող հատոր մը: Վստահ եմ որ այդ հարուստ պիտի ըլլայ իր փորձառութենէն քաղուած էջերով եւ եզակի յուշերով: Մինչ այդ սակայն, մեր դիմաց ունինք Սարգիս Նաճարեանի երեխայրիքը՝ «Դէմ Առ Դէմ»ը, որ ի մի կը բերէ անոր կատարած 46 հարցազրոյցները կրօնական, քաղաքական, մշակութային, դէմքերու եւ գործիչներու հետ, որոնք կ'ընդգրկեն 1965-2010 ժամանակաշրջանը:*

*Հարցազրոյցներուն մեծ մասը կատարուած է հայ անհատներու հետ լիբանանահայ եւ հայաստանցի, փոքր թիւ կը կազմեն օտար դէմքերու հետ կատարուած հարցազրոյցները, որոնք սակայն հայ կեանքին հետ առնչուած անձեր են: Հարցազրոյցներէն իւրաքանչիւրը իր բովանդակութեամբ կապ չունի յաջորդին հետ: Սակայն, 45 տարիներ ընդգրկող հարցազրոյցներուն հանրագումարը լաւագոյնս կու տայ յիշեալ ժամանակաշրջանի լիբանանահայ կեանքի տարբեր երեսները եւ լիբանանահայութիւն-Հայաստան այլաբնոյթ կապերուն զարգացումը: Այս իմաստով Սարգիս Նաճարեանի «Դէմ Առ Դէմ»ը հարուստ աղբիւր կը պարունակէ ապագային լիբանանահայ գաղութի պատմութիւնը գրելու համար:*

*Մամլոյ ծառայութեան կողքին, Սարգիս Նաճարեան մարդը հանրածանօթ է նաեւ որպէս հասարակական գործիչ: Այս ասպարէզէն ներս Սարգիսի ծառայութիւնները կարելի է խմբաւորել գլխաւորաբար երեք բնագաւառներու մէջ.- համայնքային-երիտասարդական, մարզական եւ բարեսիրական:*

*Համայնքային-երիտասարդական ասպարէզէն ներս, Սարգիս Նաճարեան երկարամեայ վաստակ մը ունի Հայ Կաթողիկէ*

*Երիտասարդական Միութենէն ներս: 16 տարեկանին անդամակցելով կաթողիկէ համայնքի վարչական կառոյցներէն ներս եւ ստանձնած է պատասխանատու պաշտօններ: Այս բնագաւառէն ներս կը խորհիմ թէ պէտք չունինք Սարգիս Նաճարեանի վաստակը գնահատականի ենթարկելու փորձութեան դիմելու:*

*Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ հոգեւոր տիրոջ ձեռամբ անոր շնորհուած Ս. Մեսրոպ Մաշտոց շքանշանը 2004 թուականին եւ այսօրուան մեծարանքի այս երեկոն խօսուն վկայութիւններ են եւ մեկնաբանութիւններու չեն կարօտիր:*

*Մարզական ասպարէզէն ներս, Սարգիս Նաճարեան 1961-էն մաս կազմած է Հայ Մարմնամարզական Միութեան (ՀՄՄ) վարչութեան եւ վարած անոր քարտուղարի պաշտօնը. իսկ աւելի ուշ նաեւ ատենապետի պաշտօնը: Եթէ Լիբանանի քաղաքացիական պատերազմի թոհուբոհին անծանօթ մէկու մը ըսուի թէ այսինչը մարզական միութեան մը ատենապետն է, թերեւս նախանձի զգացում մը գրգռէ, որովհետեւ երիտասարդութեան եւ մարզական կեանքին հետ կապ ունենալը հաճելի պարտականութիւն մըն է: Իսկ ան որ տեղեակ է թէ 1981-1988, այսինքն այն տարիներուն երբ Սարգիս ստանձնած էր ՀՄՄ-ի ատենապետութեան պատասխանատուութիւնը, Լիբանան կը բոլորէր իր քաղաքացիական պատերազմին ամենէն ծանր տարիները... կարծեմ ոչ ոքի նախանձը կը շարժի: Միայն նշեմ թէ այդ ժամանակամիջոցն է որ՝ 1984-ին տեղի ունեցաւ ՀՄՄ Պէյրութի ակումբին ականահարումը: Սարգիսին յանձնուեցաւ ակումբի վերակառուցումը կազմակերպելու աշխատանքը: Կարելի չէր սպասել որ պատերազմը աւարտի եւ յետոյ նախաձեռնուի վերակառուցման: Այդպիսի վայելք ոչ ոք կ'արտօնէր Սարգիսին: Ու Սարգիս գլխաւորեց վերաշինութեան աշխատանքը: Մէկ կողմէն ռումբերը կը տեղային, միւս կողմէ շինարարական աշխատանքները կը շարունակուէին... եւ այդ, նուազագոյնը ըսելու համար, ռմբահարումը կատարած իրողական ուժերու ոչ բարիացակամ հայեացքին տակ...:*

*Մեծ է Սարգիս Նաճարեանի վաստակը, անոր հասարակական գործունէութեան երրորդ բաղկացուցիչը եղող բարեսիրական բնագաւառէն ներս: Քաղաքացիական պատերազմի տարիներուն, Նոր Հաճըն թաղամասէն ներս կը գործէր դարմանատուն մը, որուն պարտականութիւնն էր առաջնային եւ անմիջական բուժօգնութիւն ցոյց տալ վիրաւորներուն: Փոքր դարմանատուն մը՝ սահմանափակ կարողութիւններով: Պատերազմէն ետք դարմանատունը կը դրուի Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան (ՀԿԲՄ) հովանաւորութեան տակ: Սարգիս*

*Նաճարեան կը նշանակուի դարմանատան տնօրէն: Շուտով դարմանատունը կ'ընդարձակի, կը տեղափոխուի աւելի յարմար վայր ու կը վերածուի ընկերային ծառայութեան եւ բժշկական կեդրոնի: Ան կ'ունենայ բժշկական առանձին բաժանմունքներ, ատամնաբուժարան եւ դեղատուն՝ մնայուն եւ այցելու բժիշկներու լայն ցանցով մը: ՀԿԲՄ կ'ունենայ իր երկրորդ ատամնաբուժարանը Ռաուտայի մէջ եւ երրորդ դարմանատուն-ատամնաբուժարանը՝ Սին էլ Ֆիլի Թոմարզա թաղամասին մէջ: ՀԿԲՄ-ի ընկերային եւ բժշկական գործունէութեան կազմակերպման եւ ծաւալման մէջ անփոխարինելի կ'ըլլայ Սարգիս Նաճարեանի դերը: Այս վկայութիւնը ես չէ որ կու տամ այդ լսած եմ ՀԿԲՄ-ի շատ մը պատասխանատուներէն. գրեթէ բոլորէն:*

*«Դէմ Առ Դէմ»ի յառաջաբանին մէջ, Սարգիս կը գրէ թէ այս գիրքը լոյս աշխարհ չէր գար եթէ լրագրութեան ասպարէզէն ինքզինք հանգստեան չկոչէր: Սա, գոնէ մխիթարական արդարացում մըն է: Բայց այն ինչո՞ւ նաեւ բարեսիրական ասպարէզէն ալ ինքզինք հանգստեան կոչեց, այս մասին իրմէ մխիթարական արդարացում մը տակաւին չլսեցինք, թերեւս յաջորդ գիրքին յառաջաբանին մէջ այդ բացատրութիւնը տրուի:*

*Իր հասարակական գործունէութեան ամբողջ ընթացքին Սարգիս Նաճարեան հանդէս կը բերէ ուղղամիտ, պարկեշտ եւ հետեւողական գործիչի մը յատկանիշները: Ան միաժամանակ լրջախոհ է եւ խնդումերես: Սարգիս Նաճարեան լաւ ժողովական է եւ լաւ ժողովրդավար: Կը յարգէ իր ժողովը, ժողովականներն ու ժողովին առած որոշումները: Սակայն, անոր համար յարգել ժողովը կառչած մնալ անոր առած որոշումներուն, չի նշանակեր քարացածութիւն կամ կաշկանդուածութիւն: Սարգիս ճկուն է, շարժուն եւ նախաձեռնող: Ան ոչ միայն հաճելի ժողովական է: Այլեւ հաճելի գրուցակից եւ հաճելի ընկեր: Իր ներկայութիւնը ընկերութեան մէջ միշտ ալ փնտռուած է: Սարգիսը հանդարտաբարոյ է, մեղմ, ան վէճեր հարթող է եւ բնաւ վիճայարոյց:*

*Կարելի է երկար խօսիլ Սարգիս Նաճարեանի մասին: Սակայն ինչ ալ ըսենք անոր մասին կը մնայ պակաս եթէ չյիշենք Սարգիսի կեանքի ընկերը. մնայուն խնդումերես, գործունեայ եւ օգտակար դառնալու միշտ պատրաստ տիկ. Զուարթը: Տիկ. Զուարթ ոչ միայն թիկունք եւ քաջալերող Սարգիսին, այլեւ անոր հասարակական գործունէութեան՝ յատկապէս համայնքային-կրթական-բարեսիրական աշխատանքներուն մէջ եղաւ Սարգիսին վստահելի գործակիցը: (Զեմ գիտեր մամուլի աշխատանքներուն մէջ ալ օգտակար կ'ըլլար թէ ոչ):*

*Յամենայնդէպս, սիրելի ներկաներ, այսօր հաւաքուած ենք գնահատելու արդար վաստակը մարդու մը որ իր գրիչով, խօսքով եւ գործով աւելի քան կէս դար ծառայեց լիբանանահայ գաղութի վերելքին: Համեստ եղաւ ան: Ինք խօսեցաւ ու գրեց ուրիշներուն մասին, իսկ իր մասին շուգեց ու չսիրեց որ խօսին: Այսօր, Սարգիսին ճիշդ այդ չսիրած օրն է:*


ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**

**Enclosed a check for (one year)**

*** $50,00 for USA**

*** $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.**

*** $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.**

**Name: ----------------------------------------**

**Address: ------------------------------------**

**City: --------- State:--------- Zip Code:------**

**Country: ------------**

**Tel :----------------------- Fax : ------------------------**

# ԵՂԻՇԷ ՊԱՏՐԻԱՐՔ ՏԷՐՏԷՐԵԱՆ

*Շարունակուած էջ 13-էն*

*կութիւնը: Երկրորդը 1975-ին, վանքի Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի նոր մասնաշէնքի պաշտօնական բացումը կատարելու՝ ի ներկայութեան բարերարներուն՝ Ալեք եւ Մարի Մանուկեաններուն եւ Թուրքիոյ Հայոց Տ. Շնորհք Պատրիարք Հօր: Երկուքն ալ, մանաւանդ առաջինը, յաջողութեամբ պսակուեցան, եւ Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան մեծագումար նուէրները հաւաքուեցան ու Տաճարը Հայ Երուսաղէմի իր բաժինը պատիւով աւարտեց: Աննախընթաց եղաւ նաեւ Վարժարաններու նոր շէնքին ընծայումը Հայրապետի նախագահութեամբ որ իր կարգին պատիւ բերաւ Հայ Երուսաղէմին:*

## Միաբանական Հաւաքն ու Տագնապը

*Աննախընթաց եղաւ 1980 Օգոստոս 3-10 օրերու միաբաններու եւ նախկին շրջանաւարտ հոգեւորականներու հաւաքը, զոյգ պատրիարքներով, եպիսկոպոսներով, վարդապետներով եւ քահանաներով, նախաձեռնութեամբ Եղիշէ Պատրիարքի եւ Վարժարաններու տեսուչ Շահէ Արք. Աճեմեանի: Հաւաքի նիւթն էր «Մեր Եկեղեցիին Առաքելութիւնը Այսօր»: Նիստերուն զեկուցում կարդացին եւ ատենապետութիւն վարեցին ներկայ 10 արքեպիսկոպոսները: Տարին նաեւ յոբելինական տարի ըլլալով կը նշէր Ժառանգաւորաց Վարժարանի հիմնադիր Զաքարիա Կոբեցի Պատրիարքի ծննդեան 200 ամեակը, եւ Եիշէ Դուրեան Պատրիարքի մահուան 50 ամեակը: Կ. Պոլսոյ հայոց Պատրիարք Շնորհք Արքեպիսկոպոս իր ներկայութեամբ եւ մասնակցութեամբ մասնաւոր կշիռ մը կուտար հաւաքին:*

*Համագումարը չորս գլխաւոր նիւթերու վերածած էր ընդհանուր օրակարգը: Ա) Ծէս եւ արարողութիւն. զեկուցող՝ Սերովբէ Արք. Մանուկեան. Բ) Կարգ եւ կանոն. զեկուցող՝ Շնորհք Պատրիարք Գալուստեան. Գ) Քրիստոնէական դաստիարակութիւն. զեկուցող՝ Թորգոմ Արք. ՄանուկեանԴ) Մեր եկեղեցւոյ ազգային նկարագիրը. զեկուցող՝ Եղիշէ Պատրիարք Տէրտէրեան:*

*Միաբանական այս հաւաքը, հակառակ տարուած լուրջ աշխատանքին, ոչ մէկ գործնական արդիւնք ընծայեց յաջորդող տասնամեակին, հետեւողական ոչ մէկ աշխատանք տարուեցաւ, այլ պարզապէս «մնաց թուղթի վրայ» ու անկէ անդին չանցաւ, բացի ՍԻՈՆ ամսագրի բացառիկ համարը որ կը մնայ իբրեւ միակ կարեւոր յուշամատեանը:*

*Սակայն, հազիւ բարձր տրամադրութիւններ եւ յուսադրիչ երեւոյթներ երեւան եկած, ներքին անհանդուրժող դիրքերէ վնասակար արարքներ եկան մթագնելու Ս. Յակոբեանց բնականոն կեանքը: 1982 թուին ներքին տագնապ մը կը ծագէր պատրիարքարանէն ներս երկու գլխաւոր հոգեւորականներու միջեւ պատահած վէճի մը որպէս հետեւանք, Եղիշէ Պատրիարքին եւ Շահէ Արքեպիսկոպոս Աճեմեանին միջեւ, որ միանգամայն Դիւանապետն էր եւ Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի տեսուչը: Աճեմեան մի քանի միաբաններու ներկայութեան անարգալից վերաբերմունք ցոյց կուտար հանդէպ իր մեծաւորին, որոնք 25 տարիներ մտերիմ ու անբաժան գործակիցներ եղած էին, միշտ միասին շրջապտոյտի ելած Եւրոպա եւ Մայր Աթոռ, ու իրենց անունները միշտ միասին երեւցած էին վանքէն ներս եւ դուրս:*

*Այս բոլորը վայրկեանի մը մէջ կը խորտակուէին երբ 15 միաբաններ Միաբանական 1982 Ապրիլ 6-ի Ժողովի մը որոշումով Շահէ Սրբազան կը դադրեցնէին Ս. Յակոբեանց միաբանակցութենէն, «քննութեան ենթարկելէ ետք Ձերդ Ամենապատուութեան նկատմամբ ցուցաբերած անարգալից ընթացքը«: Մայր Աթոռ Ս. Էջմիածին կը հարկադրուէր միջամտել իր զոյգ »Հաղորդագրութիւններով«, 1983 եւ 1985 թուականներով, որոնք Երուսաղէմի կալուածական եւ տնտեսական գործառնութեանց կը վերաբերէին: Շահէ Սրբազան անկէ ետք բնակութիւն հաստատեց Երուսաղէմ քաղաքին մէջ եւ տասը տարի անց վերջնականօրէն փոխադրուեցաւ Երեւան ուր ձեռնարկեց մտաւորական եւ կրթական աշխատանքներու:*

## Յուղարկաւորութիւնը

*Եղիշէ Պատրիարքի վերջին օծումն ու յուղարկաւորութիւնը հանդիսաւորապէս կատարուեցաւ 1990 թուի Փետրուար 10 եւ 11-ին, նախագահութեամբ նորընտիր Տեղապահ Թորգոմ Արքեպս. Մանուկեանի: Օծումը կատարեց Լուսարարապետ Գարեգին Արքեպս. Գազանճեան, իսկ հանգստեան Ս. Պատարագը մատոյց Ամենայն Հայոց Հայրապետի ներկայացուցիչ Ներսէս Արքեպս. Պոզապալեան, կարդալով նաեւ Հայրապետին ցաւակցական դամբանականը, դրուատելով «տեւապէս անմնացորդ նուիրումը Երուսաղէմի Ս. Յակոբեանց պատմական հաստատութեան, որուն ծառայեց Եղիշէ Պատրիարք պողպատեայ կամքով»:*

*Վախճանեալ Պատրիարքին երբեմն հակոտնեայ գործելակերպը Վեհափառ Վազգէն Հայրապետ «Աղթամարեան հայու ոգիով» որակեց, եւ երբեմն ալ «իր հակասական դրսեւորումներով, որուն մենք վկաներն ենք իր օրերուն, եւ իր հետ կը փակենք մատեանը իր երկրային կեանքին ու կը լռենք»: Հայոց Հայրապետը իր աղօթքը կը բարձրացնէր որպէսզի «Աստուած միշտ լուսաւոր պահէ յիշատակը հանգուցեալ Եղիշէ Սրբազան Պատրիարքին եւ մնայ միշտ օգնական ու մարտակից Ս. Յակոբեանց միաբանութեան»: Պատրիարքին թաղումը տեղի կ'ունենար Հայոց Ս. Փրկիչ վանքի միաբանական գերեզմանատան մէջ ու մարմինը կ'ամփոփուէր ի շարս հանգուցեալ նախկին պատրիարքներուն:*

# «ԱՄԷՆ ՄԱՐԴ ՄԷ ՓՈՐԱՑԱՒ ՈՒՆԻ»

*Շարունակուած էջ 14-էն*

մարդ...

(էջ 108)

*«Ապրիլի 24ը փառաւոր ձեւով տօնանք»: 114 էջում ընդծում է հերոսուհին: Ուզում է ասել, որ հայրենիքի միջոցառումների հետ քայլ են պահում: Եւ այդպէս է իրապէս: Հայրենի ռատիոյի, հեռուստատեսութեան Արցախեան ազատամարտի լուրերն ու հայրենասիրական ելոյթները ոգեւորութեան նոր ալիք են հաղորդում նաեւ Իրանահայ գաղթօճախին, կոչում տոկունութեան, համբերանքի... Գրքում խառն ու խշտիկ տեղեկութիւնների ընկալման հետ զուգահեռ հեղինակը զարգացնում է ուշագրաւ մի թեմա եւս Մատլի Բաջին ամուսին ճարելու բաղձանքի մէջ է անընդհատ, գրեթէ ամէն նամակում այդ մասին էլ է ակնարկում՝ «Մէկը չկայ, որ հետ խօսեմ» ու... բանավիճեմ, կ'աւելացնենք մենք, քանզի կանայք իրենք իրենց շուաքի հետ էլ են կռիւ տալիս: Կանանց ո՞վ կը հասկանայ, բայց կանանցից: Մատլէն Բաջին հենց այդ կինն է ամենագէտ, ամենահաս, ամենախօս, ամենատար, ամենաբեր: Նրա համար անհնարին բան չկայ, թէկուզ պետկան մակարդակով: Այնպէս, որ հեղինակը ինք իր հերոսի սեռը փոխելով է հասել այդ արդիւնքին, այլապէս անհետաքրքիր կը լինէր, եթէ տղամարդ հանդէս գար Մատլէնի փոխարէն: Ոչ, գտնուած են բանալին, բարբառը, ընդհանուր կերպարը: Մնացեալն էլ դրա շուրջ բոլորն է ծաւալւում-ծփում: Գրական-կառուցողական առումով՝ պատումը ստացուած է: Մանր-մունր թերութիւնների մասին չարժէ խօսել, որովհետեւ հեղինակը մեզնից լաւ է զգում դրանք: Մեր ասելիքի թիրախը եղել ու մնում է գեղարուեստական արժէքի հարցը: Որպէս այդպիսին՝ գիրքը շահում, նախ, որ երգիծական բնոյթ ունի, երկրորդը՝ ծայրէ ի ծարանպաճոյճ հայրենասիրութիւն կայ եւ երրորդը՝ բարբառի վերադարձնէ դէպի գեղարուեստական գրականութիւն: Այս երեք հանգամանքների բերումով էլ աշխատանքը յաջողուած է, կարելի է հրատարակել սաւը խմբագրումից ու յատկապէս սրբագրումից յետոյ: Համատարած է գաղթելու մոլուցքը: Հարսը զոռում է՝ գնալ Գերմանիա, ամուսինը համաձայն չէ: Առաջանում է կոլֆլիկտ, որ կենցաղայնութիւնից վերաճում է կոլիզայինի, այսինքն գաղափարական աստառէ ձեռք բերում... Հեղինակը զուցէ բարդ խնդիրներ չի դրել իր առջեւ, պարզապէս ուժերի ներածին չափով երգիծել է շատ շղարշային ձեւով, ինչպէս ասւում է նման դէպքերում՝ թեթեւ ժպիտով է նայել շրջապատին, պարտուող հայկական դպրոցների խնդրին (էջ 141), ուսուցիչների հեռանալուն... մինչեւ ճան խաղացողների հերոս Ծատուրին՝ Սողոմոնի ոտք զարկելն ու սիրուն Մատլիից բաժնելը...:*

*Պիտի նշել որ բոլոր ոտանաւորները հնարքների պէս են զետեղուած եւ սրտաբուխ են, յուզաթաթախ, առտնին: Սա անչափ դժուար մեթոդ է, որ ընտրել է հեղինակը, քանզի նա էլ կարող էր շարունակել նմանակերպ մենախօսութիւններից կազմուած նամակագրութիւնը: Կառուցուածքային միակ թերութիւն այն է, որ իբրեւ պատասխան՝ ոչ մի նամակ չի կիրառուած, գոնէ կէս նամակ՝ ախպէր Նազարից... Ի՞նչ է սա, վրիպա՞կ, թերացում, չգիտակցուած բացթողո՞ւմ... Ոչ, գի ընդհանուր խորագիրը «Թեհրանեան Նամականի» է մտայղացուած: Սխոլաստիկ ճշգրութիւն է սա: Ուստի երգիծավէպը ծայրէ ի ծայր մենախօսութիւն է ամփոփում:*

*Իրանահայութեան մէկ ստուար մասի՝ Ղազուինահայութեան նիստուկացի, ժողովրդական բանահիւսութեան, կենցաղի, սովորոյթների, սարք ու կարգի, բառ ու բանի մասին վիթխարի նիւթ կայ Ներսէս Տէր Մեսրոպեանի այս գրքում: Փառք ու պատիւ ուսումնասիրողներին, որ պիտի գան եւ օրհնեն հեղինակի աշխատասիրութիւնն ու աշխատութիւնը միաժամանակ:*

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91107
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք
հայերէն գիրքեր,
եւ կը ցանկանաք զանոնք նուիրել
Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝
հաճեցէք կապ պահել մեզի հետ:
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104



Everyday Low Prices! Holiday Specials!
Grey Goose Vodka All Flavors $21.99
Ketel One Vodka $17.99
Skyy Vodka $8.99
Espolon Tequila Silver or Reposado $19.99
Dewar's 12 Years $15.99
Johnnie Walker Blue Label $119.99
Hennessy VS Cognac $21.99
Hennessy XO Cognac $109.99
Courvoisier VS Cognac $16.99
Courvoisier VSOP Cognac $32.99
Jack Daniel's Old No. 7 Whiskey $14.99
Bacardi Rum Light or Gold $8.99
Baileys Irish Cream Liqueur $13.99
Sailor Jerry Rum $11.99
Jacques Cardin VSOP Cognac $14.99
Chivas Regal 12-Yr Scotch Whisky $15.99
Ciroc Vodka All Flavors $18.99
Dewar's White Label Whisky 1.75L $24.99
Grand Marnier Liqueur $29.99
Cazadores Reposado Tequila $19.99
Jagermeister Liqueur $14.99
Avion Silver Tequila $29.99
Maker's Mark Bourbon Whisky $18.99
Jose Cuervo Especial Tequila $9.99
Remy Martin 1738 Cognac $42.99
Ksarak Arak $17.99
Captain Morgan Spiced Rum $10.99
Sauza Hornitos Plata Tequila $14.99
Disaronno Originale $14.99
Noy 10 Yr Armenian Brandy $29.99
Southern California's Premier Wine & Spirits Superstore
3 LOCATIONS TO SERVE YOU
MISSION Wine & Spirits
• 1785 E. Washington Blvd., Pasadena (corner of Allen) • (626) 794 -7026
• 825 W. Glenoaks Blvd., Glendale (corner of Highland) • (818) 242-0683
• 13654 Burbank Blvd., Sherman Oaks (corner of Woodman) • (818) 785-6529
Hours: Mon. - Sat., 9am - 8pm • Closed Sunday
*This ad expires on 12/14/10 • We reserve the right to limit quantities • No CCs • Sales tax excluded • Prices subject to change without notice.
• Ad prices may remain in effect longer than the time period indicated • All items are 750ml in size unless specified.